10941
10942

291.99
Ц-91.

10942

№. 1 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԵԻ Շ. 1 №.

82

ՎԷՊԵՆԳՏՕՆ ԻՐՎԻՆԳ

ԱՆՄԵԹ ԱՐՔԱՅԱԴՈՅՆ

ԱԼ-ՔԱՄՐԼ

ԿԱՄ

ՍԻՐՈՅ ՈՒԽՏԱՒՈՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՁՐՈՅՑ.

2013

Ռուսերէնից Թարգմանեց Յակ. Խօջամալեան

ԹԱԳՈՒԻ
Տպարան Գիւլբաւսարեանի և Շահրազեանի
1894

10942

№. 1 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԵԻ Շ. 1 №.

82

ՎԷԺԻՆԳՏՕՆ ԻՐՎԻՆԳ

ԱՄԵՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ

ԱԼ-ՔԱՄՐԼ

ԿԱՄ

ՍԻՐՈՅ ՈՒԽՏԱՒՈՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԶՐՈՅՑ.

2013

Թուաբերդնով Թարգմանեց Յակ. Խօջամալեան

ԹԱԳՈՒՒ
Տպարան Գիւլբասարեանի և Շահրազեանի
1894

4295

Дозволено цензурою. Тифлисъ, 28 марта 1894 г.



1681
41

ՆՈՒԷՐ

ՍԻՐԱԾԱՂԿԱՊ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ.

Ոսկու եւ արծաթի սիրով միացած ամուսնութեան, որ ընտանեկան եւ հասարակական կեանքի վարակիչ հիւանդութիւնն ու դժբաղդութիւնն է կազմում, ինչ կարծիք, որ գտնացնել չէր կարող այս փոքրիկ թարգմանութիւնը. բաւական է, որ ժամանակակից նիւթապաշտը ստուար բազմութիւնը նրա կողմն է եւ արդարացնում է նրան:

Բայց որովհետեւ «Սիրոյ Ուխտաւորը», իւր դժուարակիր վշտերով, մաշող հոգսերով եւ քուժիչ քաղցրութիւններով, թարգման է մի վեհ, սուրբ սիրոյ, ուստի եւ նրա թարգմանութիւնը ամենայն յարգանօք նուիրում եմ այդ գաղափարական, ճշմարիտ սիրոյ վրա հիմնուած երիտասարդ ամուսնացեալներին, այդ սիրաշաղկապ ընտանիքներին:

Թարգմանիչ:

ԱՀՄԵԴ ԱՐՔԱՅԱԶՆ

ԱԼ-ՔԱՄՐԼ

ԿԱՄ

ՍՒՐՈՅ ՈՒԽՏԱՒՈՐ

ԸՐԵՒԵԼԵԱՆ ՋՐՈՑՑ.

Ահմեդ անունով մի որդի ուներ Գրանադայի մաւրերի թագաւորը։ Պալատականները Ահմեդին մանկութեան հասակից՝ նրա աչքի ընկնող բարձր արժանաւորութիւնների պատճառով անուանում էին *Ալ-Քամըլ*— այն է—*կատարեալ*։

Աստղագէտները լաւ գուշակութիւններ էին անում նրա մասին։ Նրանք նախօրօք նրա մասին թագաւորազնի վայել քաջագործութիւններ և ապագայ թագաւորի բաղդաւորութիւնն էին գուշակում։ Միայն, նրանց կարծիքով, մի ամպ կար, որ մթնացնում էր նրա վիճակը, և այն էլ վարդագոյն էր։ Նրանք եզրակացնում էին, որ սիրոյ մասին բնածին հակումն է իսկապէս, որ վտանգ է

սպառնում արքայազնին և որից նա կարող է ազատ մնալ, եթէ չիմանայ այդ քնքուշ զգացմունքի որպիսութիւնը մինչև արքուն հասակին հասնելը։ Հասնելով, ահա, այն ժամանակ միայն կարելի էր նրա կեանքը բաղդատուր ու երջանիկ համարել։

Որպէսզի որդու կեանքը վտանգից ապահով լինի, թագաւորը մտադրուեց արքայազնին մի այնպիսի տեղ պահել, ուր նա չը կարողանար կնոջ երես տեսնել և սէր խօսքը լսել։ Այդ պատճառով էլ Ալհամբրի գագաթին, սքանչելի այգու մէջ, մի գեղեցիկ պալատ շինել տուեց՝ շրջապատուած բարձրաբերձ պարիսպներով, որ յայտնի է ծեննեբալայֆա անունով։ Այդ պալատում տեղաւորեց պատանի Ալհմեդին, վերակացու և ուսուցիչ կարգելով նրա վրա Էբէն-Բօնաբբէնին, որը արաբների ամենանշանաւոր իմաստուններից մէկն էր համարւում և իւր կեանքի մեծ մասը անց էր կացրել Եգիպտոսում՝ բևեռագրերի և բուրգերի ուսումնասիրութեամբ՝ և որը եգիպտական մումիաների հրապոյրն աւելի նախապատիւ էր համարում աշխարհիս բոլոր գեղեցկութիւններից։ Այդ գիտնականին յանձնուած էր թագաժառանգին կրթել բոլոր գիտութիւնների մէջ, միայն կատարելապէս զգուշանալով, որ նա չը գիտենայ, թէ ինչ է սէրը։

—Դարձ դէր այն բոլոր նախազգուշութիւնները, որ հարկաւոր կը համարես,—ասաց թագաւորը,—բայց իմացիր, ով Էբէն-Բօնաբբէն, որ եթէ

իմ որդին քո հսկողութեան տակ մի ամենափոքրիկ հասկացողութիւն անգամ ստանալու լինի արգելուած գիտութեան մասին, այն ժամանակ գլուխդ ուսերիդ վրա չի մնալու։

Այս խօսքերի վրա Բօնաբբէն իմաստունը ժպտաց։

—Թող թագաւորի սիրտը իւր որդու մասին այնպէս հանգիստ լինի, ինչպէս իմը հանգիստ է իմ գլխի մասին։ Մի՛թէ կարող եմ ես որ և իցէ մէկին ուսուցանել այդ ամօթալի կրքի մասին։

Հէնց այս փիլիսոփայի հսկողութեան տակ մեծանում էր արքայազնը, բնակուելով առանձնացած մենաստանում և սրան շրջապատող այգիներում։ Նրա ծառայողներն էին սևամորթ ստրուկները, այդ համր հրէշները, որոնք հասկացողութիւն անգամ չունէին սիրոյ մասին, և եթէ գիտենային էլ, խօսքով նրան արտայայտել անկարող էին։

Նրա մտաւոր ընդունակութիւնների զարգացումը Էբէն-Բօնաբբէնի առանձին հոգացողութեան առարկան էր. սա աշխատում էր իւր աշակերտին կրթել եգիպտական գաղտնիքների մէջ, բայց արքայազնը շատ գժուարութեամբ էր ըմբռնում նրանց, և շուտով յայտնուեցաւ, որ նա միանգամայն անընդունակ էր փիլիսոփայութեան։

Արքայազնը թէև քիչ դիւրահաւան և պարզամիտ էր, բայց և այնպէս սիրով հետևում էր Էբէն-Բօնաբբէնի խորհուրդներին, զգուշանում էր

յորանջելուց և համբերութեամբ մինչև վերջը լսում էր ձանձրացուցիչ դասերը, որոնք զանազան գիտութիւններով արքայազնի միտքը հարստացնելու նպատակով էին աւանդվում։ Եւ այսպէս, Ա.Համեդ արքայազնը բաղդատուր կերպով հասաւ քսան տարեկան հասակին և հրաշալի իմաստութիւններին, ոչինչ չիմանալով սիրոյ մասին։

Հէնց այդ ժամանակն էր, որ արքայազնի բարք ու վարքի մէջ փոփոխութիւն մտաւ. նա բոլորովին թողեց գիտութիւնները, անձնատուր եղաւ մշտական խաղերին իւր այգիներում և երբեմն էլ՝ մտածութիւնների մէջ ընկղմուած՝ աղբիւրների կողքին նստելով էր անցկացնում ժամանակը։

Նրան ընտիր կրթութիւն տալու նպատակով անգամ՝ մոռացութեան չէր տրուած և երաժշտութիւնը, և հիմա նա իւր ժամանակի մեծ մասը սկսեց նուիրել այս արուեստին, և դէպի բանաստեղծութիւնն ունեցած նրա հակումն աւելի ևս սկսեց աչքի ընկնել։

Պատմել չի կարելի, թէ որքան այդ անհանգստացնում էր իմաստուն Էբէն-Բօնաբբէնին. նա ոչինչ աշխատութիւն, ջանք չէր խնայում ալգեբրայի դասընթացքն ամենամեծ խնամքով աւանդելու, որ կարողանայ հանգցնել իւր աշակերտի մէջ այդ ամօթաբեր զգացմունքը, բայց և այնպէս ալգեբրան չէր մտնում նրա գլուխը։

—Ես տանել չեմ կարողանում այդ ալգեբրան,—ասում էր արքայազնը,—դա միանգամայն ինձ զզուեցնում է, տո՛ւր ինձ այնպիսի մի գիտութիւն, որ աւելի սրտին կարողանայ խօսել։

Այս խօսքերը լսելով, իմաստուն Էբէն-Բօնաբբէնը շարժում էր գլուխը։

—Այժմ հասել է փիլիսոփայութեան վախճանը,—մտածում էր նա,—արքայազնն այժմ գիտէ, որ սիրտ ունի։

Իւր աշակերտին աւելի և աւելի ուսումնասիրելով, նա նկատեց, որ նրա մինչև այդ ժամանակ ծածկուած զգայականութիւնը երևան է եկել և նրան պակասում է միայն բաւականութիւն պատճառող առարկան։

Արքայազնը, իւր զգացմունքները յագեցնելու համար, թափառում էր ծեներալյֆալի այգիներում՝ ինքը էլ չիմանալով, թէ ինչ է ուզում։

Նրա դէպի սէրն ունեցած հակումը փոքր առ փոքը սկսեց երևան գալ դէպի անշունչ առարկաները. նա ունէր սիրած ծաղիկներ, որոնց շատ քնքուշ հոգացողութեամբ էր վերաբերվում, ունէր սիրած ծառեր, մանաւանդ մէկը, որ գեղեցիկ տեսք ունէր, ամենից աւելի էր սիրում։ Նա այդ ծառի կեղևի վրա փորագրեց իւր անունը, նրա ճիւղերը զարդարեց դրասանգներով (հիւսած ծաղիկներով), իսկ նրա պատուին էլ տաղեր սկսեց երգել իւր վին գործիքի ձայնակցութեամբ։

Իմաստուն Էբէն-Բօնաբբէնը, իւր աշակերտի

այդ դրութիւնը տեսնելով, միանգամայն գլուխը կորցրել էր: Նա տեսնում էր, որ աշակերտը շատ էլ հեռու չէ արդելուած գիտութիւնից, թէ մի ամենաթեթև ակնարկութիւն էր հարկաւոր, որ բացուի չարաբաստիկ գաղտնիքը: Դողալով արքայազնի հանգստութեան և իւր գլխի պահպանութեան մասին, նա շտապեց հեռացնել նրան այդու գայթակղութիւններից և տեղափոխեց ծեներալյֆայի ամենաբարձր աշտարակներից մէկը: Աշտարակի մէջ հոյակապ սենեակներ էին գտնվում՝ պատուհաններից երևող ընդարձակ, անծայր տեսարաններով, բայց անհամեմատ բարձր այն մթնոլորտից, ուր գտնվում էին հիանալի, հրապուրիչ զրուցատեղերը, որոնք այնքան վտանգաւոր էին Ա.Հմեդի զգացումների համար:

Բայց քնչ անէր նա այդ բանտում, քնչպէս անցկացներ նա իւր ձանձրացուցիչ ժամերը: Նա արդէն բազմատեսակ հաճելի գիտութիւններն աւարտել էր, իսկ ալգեբրան էլ նրա գլուխը չէր մտնում: Նրա բաղդից Էբէն-Բօնաբբէնը գիտէր թուրչուհների լեզուն, որ սովորել էր նա Եգիպտոսում հրէից ռաբբիից: Այդ գիտութիւնն, ինչպէս ինքն էր ասում, ժառանգաբար հասել էր նրան Սողոմոն իմաստունից, իսկ Սողոմոնին էլ, որպէս թէ, սովորեցրել էր Սարա թագուհին: Հազիւ իմաստունը արքայազնին այդ մասին խօսք էր բացել, որ նա սկսեց ագահաբար անձնատուր լինել այդ

գիտութեան և շատ շուտով այնքան տեղեակ էր նրան, որքան նրա ուսուցիչը:

Աշտարակն այլ ևս նրա համար մենարան չէր: Նա արդէն ձեռքի տակ ունէր ընկերներ, որոնց հետ կարող էր խօսակցել ու ժամանակ անցկացնել: Առաջին ծանօթութիւնը, որ նա ունեցաւ, բազէի հետ էր: Սա բուն էր դրել աշտարակի բարձր ատամներից մէկի ճեղքում, որտեղից ստէպ դէպի երկնակամարը որս անելու էր սլանում: Բայց արքայազնը նրա ունեցած արժանաւորութիւնը բաւական չը համարեց, որ կարելի լինէր նրան սիրել և յարգել: Բազէն օգային մի ինքնագով աւազակ էր, նրա խօսակցութիւնները մեծ մասամբ լինում էին գիշատութեան մէջ իւր աւարի, քաջագործութիւնների և յանդուգն յաղթութիւնների մասին:

Վերջերում նա ծանօթացաւ բուի հետ, որ բոլոր թռչունների մէջ իւր մեծ գլխով և ուռուցիկ շիլ աչքերով ամենագիտունն էր համարվում: Ամբողջ օրերով նա նստում էր պարսպի մութ խորշում և միայն գիշերներն էր թռչում: Նա հռչակուած էր իւր խմաստութեամբ. խօսում էր աստղաբաշխութեան, լուսնի մասին, տեղեկութիւններ էր տալիս մինչև իսկ ծածկեալ գիտութիւնների մասին և լիովին անձնատուր էր մետաֆիզիքային: Բայց արքայազնի համար դրա դատողութիւնները աւելի ձանձրալի էին, քան իմաստուն Էբէն-Բօնաբբէնինը:

Հէնց այդ տեղից մօտիկ, կամարի մութ անկիւնում, գլխիվայր կախուած էր չղջիկը, որը միայն երեկոներն էր խօսում և այդ պատճառով էլ բոլոր իրերի մասին մթին հասկացողութիւն ունէր, քանի որ նրանց տեսնել, պարզ որոշել չէր կարողանում և ոչ մի բանում բաւականութիւն չէր գտնում:

Նրանից մօտիկ կենում էր ծիծեռնակը, որի հետ արքայազնը սկզբում շատ խօսեց: Նա մի ուրախ շատախօսի մէկն էր, դրա հետ 'իմիասին անհանգիստ և քրթմնջող: Իսկ սա էլ՝ ընդհատուած խօսակցութիւնը դեռ չը վերջացած՝ կը սկսէր անդադար դէս ու դէն թռչել: Վերջերում յայտնուեց, որ թերուս ծիծեռնակը ամեն բան կիսատ-պռատ գիտէր և երևակայելով, թէ ամեն բանից տեղեկութիւն ունի, ոչինչ չը գիտէր հիմնաւոր:

Միայն այդ թևաւոր բնակիչների հետ էր, որ արքայազնը դէպք էր ունենում գործ դնել իւր սովորած նոր լեզուն, քանի որ մուսերը մինչև աշտարակը թռչել չէին կարողանում: Սակայն նրանց հետ ունեցած ծանօթութիւնը շուտով ձանձրացրեց նրան: Թռչունների խօսակցութիւնը այնպէս քիչ էր մտքի համար հետաքրքրական, մանաւանդ սրտի, որ արքայազնը նորից անձնատուր եղաւ իւր միայնութեան: Անցաւ ամեռը և վրա հասաւ գարունը իւր բոլոր գեղեցկութեամբ. ծաղկափթիթ կանաչով, մեղմ ու հեզիկ զեփիւռով

և թռչունների երամներով: Մի ակնթարթում ձեռներալյֆայի այգիներում և մերիներում սկսեցին հնչել նոր բուն դրած թռչունների երգերն ու մեղեդիները և հասնել արքայազնի լսելիքներին՝ նրա մենարան աշտարակում: Ամենուրեք նա նոյն սէր, սէր, սէր երգն էր լսում: Դա լսվում էր զանազան դայլայլիկներում և նրանց զանազան ելևէջներում:

Արքայազնը, քարացածի պէս, լուռ լսում էր:

—Ի՞նչ է նշանակում այդ սէրը,—մտածում էր նա,—որով, կարծես, ամբողջ աշխարհս լցուել է և որի մասին միայնակ ես եմ, որ ոչինչ չը գիտեմ:

Նա այս հարցով դիմեց իւր ծանօթ բազէին, իսկ սա արհամարհական ձևով դարձաւ նրան՝ պատասխանեց..

—Այդպիսի բաների մասին հարցնում են հասարակ, խաղաղ թռչուններին, որոնք ստեղծուած են մեզ՝ օդային թագաւորներիս՝ կերակրելու համար: Իմ արհեստը պատերազմն է, իմ բաւականութիւնը՝ կռիւը: Մի խօսքով, ես զինուոր եմ և սիրոյ մասին ոչինչ չեմ հասկանում:

Արքայազնը անբաւականութեամբ երեսը դարձրեց նրանից և դիմեց բու ճգնաւորին:

—Այս թռչունը խաղաղներիցն է,—մտածեց նա,—և գուցէ կարողանայ մեկնել իմ հարցը:

Եւ այսպէս, նա խնդրեց բուին բացատրել իրան, թէ ինչ կը նշանակի սէրը, որի մասին ե-

գում են բոլոր թռչուններն այգիներում և անտառներում։

Այդ հարցին բուն այնպիսի մի ակնարկ ձգեց արքայազնի վրա, որ պարզ երևում էր, թէ սաստիկ վիրաւորուած է համարում իւր արժանապատուութիւնը։

—Ես գիտութիւններով և հետազօտութիւններով եմ պարապուած, ցերեկներն էլ իմ բնակարանում նստած մտածում եմ ուսածներիս մասին, իսկ ինչ վերաբերում է երգեցիկ թռչուններին, որոնց մասին դու լիշեցիր, նրանց երբէք չեմ լսում։ Ես արհամարհում եմ թէ նրանց և թէ նրանց երգերը։ Փառք Աւլահին, որ ես չեմ կարող երգել։ Ես փիլիսոփայ եմ և սիրոյ մասին ոչինչ չը գիտեմ։

Արքայազնը նոյն հարցով դիմեց գիշերամկան։ Նա ցցեց իւր խորշոմած քիթը և անբաւականութեամբ պատասխանեց։

—Ինչո՞ւ այդպիսի պարապ հարցերով վրդովում ես առաւօտեան իմ անուշ քունը, ասաց նա բարկացած։ Ես միայն երեկոներն եմ թռչում, այն ժամանակ, երբ բոլոր թռչունները քնած են լինում։ Ես երբէք ինձ չեմ անհանգստացնում այն բաների մասին, որ վերաբերում է նրանց։ Ես ոչ գազան եմ, ոչ թռչուն՝ և այս մասին շնորհակալ եմ երկնքից։ Մի խօսքով, ես մարդատեաց-միզանտրօպ եմ և սիրոյ մասին ոչինչ չը գիտեմ։

Վերջապէս արքայազնը սոխակուած դիմեց ծի-

ծեռնակին, հէնց այն ժամանակ, երբ նա պտտվում էր աշտարակի շուրջը։ Ծիծեռնակը սովորական չնչին մեծ գործերից հազիւ թէ կարողացաւ նրան պատասխանել։

—Ձիշտն ասած, ես այնպէս զբաղուած եմ հասարակական գործերով և այնքան մասնաւոր հոգսեր ունիմ վզիս բարձած, որ ժամանակ չի մնում ինձ այդ մասին մտածելու։ Ես պարտաւոր եմ օրական հազարաւոր այցելութիւններ անելու և հազար ու մի կարևոր գործեր կատարելու, այնպէս որ ինձ բոլորովին ժամանակ չի մնում սիրային երգերով զբաղուելու։ Մի խօսքով, ես համաշխարհային բնակիչ եմ և չը գիտեմ, թէ ինչ է նշանակում սէրը։ Այս խօսքերից յետոյ ծիծեռնակը մի րոպէում թռաւ, անյայտացաւ։

Արքայազնը սիրոյ վերաբերեալ մի բան իմանալու մասին բոլոր յոյսը կտրած՝ միանգամայն վհատութեան մէջ էր։ Բայց և այնպէս մի կերպ ուզում էր բաւականացնել իւր հետաքրքրութիւնը։ Նրա զգացումների այդ ալէկոծութեան ժամանակ մտաւ նրա մօտ նրա նախկին ուսուցիչը։ Արքայազնն իսկոյն և եթ, դիմելով նրան, բացականչեց։

—Ո՛վ իմաստուն Էբէն-Բօնաբբէն, դու ինձ յայտնեցիր երկրային իմաստութիւնը, բայց միանգամայն անգիտութեան մէջ թողեցիր մի բանում, իսկ ես ցանկանում եմ անպատճառ իմանալ այդ։

—Հարցրու՛ ինձ, արքայազն, ինչ որ գիտէ

քո ստրուկը՝ պատրաստ է քո ծառայութեան:

—Աւա՛ ինձ, ո՛վ իմաստունների իմաստուն, ինչպիսի յատկութիւն ունի այն, որը սէր է կոչւում:

Էբէն-Բօնաբբէն իմաստունը կայծակնահարի պէս եղաւ: Նա դողաց և գունատուեց: Կարծես թէ զգաց արդէն, որ գլուխը այլևս իւր ուսերի վրա չէ: Մի այդպիսի հարց որտեղից մտաւ արքայազնի գլուխը և ումնից սովորեց նա այդ ատելի խօսքը:

—Լսէր, ո՛վ Էբէն-Բօնաբբէն, ասաց Նա:

Եւ իմաստունը սկսեց լսել:

Սոխակն աշտարակի ներքև, այգում նստած, վառուած երգում էր վարդին: Ծաղկափթիթի մարգերից և անտառից թռնդում էր թռչունների մեղեդին և ամեն կողմից լսվում սէր, սէր, սէր համերգը:

—Ա՜խ Ա՛գպեար—Մեծ է Աստուածը, բացականչեց իմաստուն Բօնաբբէնը: Ո՞վ է կարող ծածկել գաղտնիքը մարդու սրտից, երբ նոյն իսկ օդային թռչուններն անգամ յայտնում են նրան միաբան:

Եւ յետոյ, դառնալով արքայազնին, ասաց.

—Ո՛վ արքայազն, մի՛ լսիր այդ մոլորեցուցիչ երգերին: Ծածկիր ինքդ քեզնից այդ վտանգաւոր գիտութիւնը: Իմացիր, որ մեծ մասամբ այդ սէրն է պատճառն այն չարիքների, որ հասնում են անբաղդ մահկանացուներին: Դրանից են առաջ գալիս վշտերն ու անբաւականութիւնները եղբայրների և բարեկամների մէջ: Դա է սպանութիւնների դրդիչը, դա է ամայացնող պատերազմների մղիչը: Դրան ընկերակցում են հոգսն ու տխրութիւնը, ձանձրալի օրերն ու տրտում գիշերները: Դա է չորացնում ծաղիկը երիտասարդական, դա է ուրախութիւնը մթնացնում տխրութեան վշտով: Վաղահաս ծերութեան հասցնողն այդ սէրն է:

Իմաստուն Էբէն-Բօնաբբէնը, թողնելով արքայազնին խորը մտածութիւնների մէջ ընկղմուած, արագ հեռացաւ: Իզուր էր աշխատում նա հալածել մտքից իւր ցնորքների առարկան, որն անհանգստացնում, զանազան սխալ եզրակացութիւններով անտանելի տանջանք էր պատճառում նրան:

—Անտարակոյս,—ասում էր ինքն իրան արքայազնը, լսելով թռչունների երգերը,—այդ ձայների մէջ վիշտը չէ խօսողը, նրանից ամեն մէկը իւր ուրախութեան զգացմունքն է արտայայտում: Եթէ սէրն, իրաւ, բոլոր չարիքների պատճառ է և անբաղդութիւն, ապա ինչու թռչունները չեն նստում միայնութեան մէջ և տանջում միմեանց, այլ ուրախ թռչում են այգիների և անտառների մէջ, ուրախ խաղում միմեանց հետ ծաղիկների մէջ:

Մի անգամ, առաւօտը, այդ անբացատրելի առարկայի մասին մտածութիւններով պաշարուած, պառկած էր: Նա բացել էր սենեակի լուսամուտը, որպէս զի թարմանայ առաւօտեան օդով, որն

1681/41

ՀԱՅԿ-ՍՍՀ

իսկապէս Դարբօ հովտի լիմոնների հոտով էր լցուած։ Հնչում էր սոխակի դայլայլիկը։

Նա իւր ծանօթ երգն էր երգում։ Հէնց այն ժամանակ, երբ արքայազնը լսում և հառաչում էր, մտաւ նրա սենեակը մի գեղեցիկ աղաւնի, հալածուած բազէից, և ընկաւ յատակի վրա, իսկ նրա հալածողը, զրկուելով իւր աւարից, թռաւ, հեռացաւ լեռան կողմը։

Արքայազնը բարձրացրեց շնչասպառ աղաւնուն, շոյեց նրա թևերը և սեղմեց իւր կրծքին։ Երբ նրա փաղաքշանքները նրան կրկին ուշքի բերին, նա տեղաւորեց նրան ոսկեայ վանդակի մէջ։ Նրան իւր ձեռքով ամենապատուական ցորեն էր ուտացնում և ամենայստակ ջուր խմացնում։ Զբնայելով դրան, թռչունը տխուր ու տրտում նստում էր և կրկին ոչինչ չէր ուտում։

—Ի՞նչ է պատահել քեզ, ասաց Ա.Հմեդ արքայազնը։ Մի՞թէ մի բանի պակասութիւն ունես, ինչ ես կամենում, հոգեակս։

—Իհարկէ որ պակաս է, պատասխանեց աղաւնին, չէ՞ որ բաժանուած եմ ընկերուհուց և այն էլ գարնանը, երբ ամենը սիրով է շնչում։

—Սիրո՞վ, կրկնեց արքայազնը, խնդրում եմ, սիրելիդ իմ թռչնակ, ասա՛ ինձ, արդեօք, չե՞ս կարող մեկնել ինձ, թէ ինչ է սէրը։

—Ինչո՞ւ չէ, շատ լաւ կարող եմ։ Սէրը տանջանք է մէկ սրտի համար, երջանկութիւն՝ երկու

սրտերին, երկպառակութիւն և թշնամութիւն է երեք սրտերի մէջ։ Դա դիւթիչ է, երբ հրապուրում է մէկ արարածին դէպի միւսը, կապում է նրանց քաղցր համակրութեամբ, և այդպիսիներին նա երջանկութիւն է շնորհում իմիասին, իսկ անբաղդութիւն—առանձնութեան մէջ։ Մի՞թէ դու դուրկ ես այստեղ այդպիսի մի առարկայից, որի հետ կապուած լինէիր այդ քնքուշ զգացմունքներով։

—Ես աւելի իմ ուսուցիչ Էբէն-Բօնաբբէնին եմ սիրում, բայց նա էլ յաճախ տխուր է, և ես ինձ երբեմն բաղդաւոր եմ զգում, երբ նրանից հեռու եմ գտնվում։

—Բայց այդ միայն համակրութիւն է, որ ձեր մէջ կայ։ Ես խօսում եմ սիրոյ մասին, բնութեան այդ մեծ խորհրդի՝ կեանքի սկզբնապատճառի մասին, երիտասարդութեան այդ յափշտակող, զմայլեցնող զուարճութեան, ծերութեան այդ խաղաղ ու հանգիստ բաւականութեան մասին։ Նայիր, արքայազն, տես, թէ ինչպէս տարուայ այս եղանակին սիրով լցուած է բնութիւնը։ Իւրաքանչիւր գոյութիւն աշխարհումս մէկ ուրիշի հետ է բաժանում իւր սէրը, ամենահասարակ թռչունն անգամ մի ուրիշին է երգում իւր սէրը, ամենաչնչին միջատն անգամ սիրում է։ Ա՛հա այս թիթեռը, տեսնո՞ւմ ես, այն, որ աշտարակն ի վեր օդի մէջ թռչում է,—նա ևս ընկերակցութեամբ է

բաղդաւոր: Ո՛վ արքայազն, մ՛թէթ դու երիտասարդութեանդ այդքան քաղցր օրերն անցրել ես առանց սիրոյ հասկացողութեան: Մ՛թէթ այստեղ չունես դու մի սիրելի, չունես մի չքնաղ արքայադուստր կամ մի մատաղ կոյս, որ շարժած լինէր սիրտդ, լցրած լինէր կուրծքդ քնքուշ ցանկութիւններով, հաճելի վշտերի քաղցր վրդովմունքներով:

—Ա՛յժմ եմ միայն սկսում հասկանալ,—հառաչելով ասաց նրան արքայազնը,—այդ յուզիչ զգացմունքներին ես քանիցս տիրացել եմ, սակայն պատճառը գիտենալ անկարող եմ եղել, բայց ո՞րտեղից կարող ես այսպիսի մի մենարանում գտնել քո նկարագրած առարկան:

Նրանց խօսակցութիւնը երբ շարունակուեց և երբ առաջին դասն արդէն արքայորդու համար հասկանալի դարձաւ,—

—Ա՛խ,—ասաց նա,—եթէ սէրն, իրաւ, այդպիսի մի բաւականութիւն է պատճառում, իսկ բաժանումը՝ չարիք, այն ժամանակ թո՛ղ ների ինձ Ա՛լլահը, որ ես զրկել եմ ուրախութիւնից երկու սիրող սրտեր:

Նա բացեց վանդակը, վերցրեց աղաւնուն և մի քանի անգամ համբուրելուց յետոյ տարաւ պատուհանի մօտ:

—Թռի՛ր, բաղդաւոր թռչնակ, ասաց նա, գնա՛ վայելի՛ր սրտիդ հատորի հետ երիտասարդութեանդ

քաղցր ժամերը այս հրապուրիչ գարնանը: Ինչո՛ւ, իրօք գերի, պահել քեզ բանտարկութեան մէջ այս աշտարակում, ուր սէրը երբէք մուտք չունի:

Աղաւնին թափահարեց իր թևերը, սլացաւ օդի մէջ և յետոյ սահելով վայր իջաւ Պարբօ Հովտի ծաղկաւէտ անտառում:

Արքայազնը, որ հետևում էր նրան աչքերով, յետոյ անձնատուր եղաւ դառն մտածմունքների: Թռչունների համերգը, որ առաջ յափշտակում էր նրան, այժմ կրկնապատկում էր նրա ցաւը: Լսում էր կրկին սէր, սէր, սէր... Աւա՛ղ, խեղճ երիտասարդ, դու այժմ հասկացար այդ երգը:

Նրա աչքերը փայլեցին կրակով, երբ այնուհետև տեսնուեցաւ իմաստուն Բօնաբբէնի հետ:

—Ինչո՛ւ էիր թողել ինձ կոշտ ու կոպիտ տգիտութեան մէջ,—աղաղակեց նա,—ինչո՛ւ էիր ծածկում ինձնից բնութեան մեծ գաղտնիքը և կեանքի սկզբնապատճառը, այն ժամանակ, երբ ամենաչնչին զեռունն անգամ գիտէր այդ: Տե՛ս, բոլոր բնութիւնը ծնական ուրախութեան մէջ է, իւրաքանչիւր կենդանի գոյութիւն ցնծում է մի ուրիշի հետ, ահա՛ այն սէրը, որ կամենում էի հասկանալ: Ինչո՛ւ միայն ես պետք է զրկուած լինէի այդ ուրախութիւնից: Ինչո՛ւ երիտասարդութեանս այնքան տարիները պիտի անցնէին առանց հասկացողութիւն ունենալու սիրոյ պատճառած զուարճութիւնների մասին:

Իմաստուն Էբէն-Բօնաբբէնը տեսաւ, որ գաղտնապահութիւնը այլևս անօգուտ է, որովհետև արքայազնն արդէն հասկացողութիւն էր կազմել այդ վտանգաւոր և արգելուած գիտութեան մասին: Նա այնուհետև յայտնեց նրան աստղաբաշխների նախագուշակութիւնների և նախազգուշութիւնների մասին, որոնք գործ էին դրուած նրա կրթութեան վերաբերմամբ սպառնող վտանգից ազատ մնալու համար:

—Արքայազնդ իմ, այժմ ձեր ձեռին է իմ կեանքը,—ասաց նա,—յայտնիր ծնողիդ, որ դու իմ հսկողութեան ներքոյ հասկացողութիւն ստացար սիրոյ մասին և որ իմ գլուխը դրա փոխարէն պատրաստ է նրան պատասխան տալու:

Արքայազնը, այնքան, որքան կարելի է պահանջել մի երիտասարդից, ամենայն խոհեմութեամբ, անվրդով լսեց նրա բացատրութիւնը և նրա ընդդէմ ամենևին ոչինչ չը խօսեց: Նա սիրում և յարգում էր իւր ուսուցիչ իմաստուն Էբէն-Բօնաբբէնին և այդ սէրը, քանի որ մտքի ծընունդ էր, համաձայնեց ծածկել իւր սրտում և այդպիսով վտանգի չենթարկել փիլիսոփայի գլուխը:

Բայց և այնպէս նրա համեստութիւնը ամենածանր փորձութիւնների հետ էր կապուած: Մի քանի օրից յետոյ, երբ նա մտածութեան մէջ զբօսնում էր շրջապատող ամրութիւնների մէջ, նա տեսաւ իւր ազատած աղաւնուն, որն, օդում

ճախրելուց յետոյ, վայր իջաւ և աներկիւղ նստեց նրա ուսի վրա:

Արքայազնը սեղմեց նրան իւր կրծքին:

—Երանի՛ քեզ, թռչնակ,—ասաց նա,—որ երկրից վեր բարձրութիւններում կարողանում ես թռչել, ասա՛, որտեղ էիր այն օրից, որ ես քեզ բաց թողեցի:

—Հեռաւոր երկիրներ էի թռել, արքայազնդ իմ,—պատասխանեց աղաւնին,—որտեղից բերել եմ քեզ, որպէս երախտագիտութեան ապացոյց, ինձ շնորհած ազատութեանդ համար մի փոքրիկ, բայց հաճելի լուր: Երբ ընդարձակ տարածութեան մէջ թըռչում էի լեռների և հովիտների վրայից և սաւառնում էի օդի մէջ, նկատեցի ներքևում մի հինաւուրց այգի, որը լիքն էր ծաղիկներով և հազարաւոր պտուղներով: Այգին ձգուած էր հարթ տարածութեան վրա, վճիտ աղբիւրի ափին, իսկ նրա մէջտեղում բարձրանում էր մի հոյակապ ապարանք: Ես վայր իջայ մի վայրկեան հանգստանալու յոգնածութիւնից: Կանաչ նստարանի վրա, ինձնից ոչ այնքան հեռու, նստած էր չքնաղ ու մատաղ արքայադուստրը: Նա շրջապատուած էր իւր նման մատաղ նաժիշտներով, որոնք զարդարում էին նրան գրաասանգներով և ծաղիկներով: Բայց դաշտի և պարտիզի ծաղիկներից և ոչ մէկը չի հասնիլ նրա գեղեցկութեանը: Այստեղ ծաղկում էր նա առանձնութեան մէջ, և որովհետև այգին բարձր պարիսպներով էր շրջապատուած, ուստի մահկանացուներից

և ոչ մեկը չէր համարձակվում ոտք դնել այստեղ։ Երբ ես տեսայ այդ հիանալի կոյսին, այդ պատանի և անմեղ արարածին, իսկոյն մտածեցի. ահա սա՛, այս երկնային արարածը միայն ընդունակ է սէր ներշնչելու իմ արքայազնին։

Աղաւնու նկարագրութիւնը մի կայծ էր արքայազնի այրուող սրտի համար։ Մինչև այսօր դէպի սէրն ունեցած նրա հակումն այժմ սկսեց երևան գալ իւր բոլոր ուժով։ Նա մի անյաղթելի սէր զգաց դէպի արքայադուստրը, ուստի նրան վառվռուն խօսքերով մի նամակ գրեց, բացատրելով իւր զգացմունքները, լալով իւր գերութիւնը, որը արգելք էր լինում իրան նրա ոտքերի տակ ընկնելու։ Եւ որովհետև բանաստեղծ էր ծնուած ու սիրով տոգորուած, ուստի, մի զգացուած սիրերգ էլ աւելացնելով, գրեց հասցէն. «անծանօթ գեղեցկուհուն՝ բանտարկուած Ա.Ի մեդից»

Յետոյ, թաթախելով նամակը մուշկով և վարդաջրով, տուեց աղաւնուն։

—Դէհ, թռչիր, յանձնարարութիւններիս հաւատարիմ կատարող,—ասաց նա,—գնա՛ արագ, թռիր լեռների և ձորերի, գետերի և հովիտների վրայից, չես իջնիլ գրուցատեղերում հանգստանալու, չես դիպչիլ գետնին, մինչև չես յանձնիլ նամակս իմ սրտի սիրելիին։

Աղաւնին սլացաւ վեր՝ օդի մէջ և ուղղեց իւր թռիչքը դէպի իւր ծանօթի կողմը։ Արքայազնը

այնքան հետևեց նրան աչքերով, մինչև որ նա մի կէտ դարձաւ ամպերի մէջ և փոքր առ փոքր անյայտացաւ լեռների յետև։

Ժամ առ ժամ սպասում էր արքայազնը իւր սիրոյ լրաբերին։ Սակայն իզո՛ւր։ Մի անգամ, արևը մայր մտնելուց առաջ, երբ մեղադրում էր աղաւնուն, որ նա մոռացաւ իրան, ահա, հաւատարիմ թռչունը ներս թռաւ նրա սենեակը, ընկաւ նրա ոտերի տակ և փչեց վերջին շունչը։

Փորձուած որսորդի նետից վիրաւորուած կրծքով, բայց և այնպէս կեանքի վերջին թոյլ ուժերով, նա ձգտել էր կատարել արքայազնի յանձնարարութիւնը։

Արքայազնը, հէնց այն ժամանակ, երբ մօտեցաւ բարձրացնելու հաւատարմութեան այդ ցաւալի զոհին, տեսաւ աղաւնու վզին մարգարտեայ մի մանեակ և նրանից մի երիտասարդ հիանալի արքայադստեր էմալեայ պատկեր կախուած, որ անկարծիք այգու անծանօթ գեղեցկուհունը պիտի լինէր։ Բայց ո՛վ է նա, ուր է գտնվում, ինչպէս է ստացել նամակը և արդեօք ուղարկած պատկերը նրա փախադարձ սիրոյ պատասխանն էր,—ինչպէս գիտենալ։ Դժբաղդաբար աղաւնու մահը այդ ամենը թողնում էր գաղտնիք և անյայտութեան մէջ ծածկուած։

Արքայազնը նայեց պատկերին, այնքան, մինչև որ աչքերը լցուեցին արտասուքով։ Նա սեղ-

մեց պատկերը շրթունքներին, սեղմեց սրտին և ժամերով չը հեռացրեց նրան իւր աչքերից:

—Չքնաղ կենդանագիր... ասաց նա: Ա՜խ, և հէնց միայն մէկ պատկեր է: Բայց, երևի, այդ թաց աչքերն ինձ են նայում քնքնշաբար: Երևի, այս վարդագոյն շրթունքներն ինձ են յոյս խոստանում: Իզուր երևակայութիւն: Արդեօք այդպէս քնքուշ չէն նայել նրանք բաղդատուր Հակառակորդին: Եւ այս ընդարձակ երկրի վրա ո՛ւր կարող եմ գտնել այս պատկերի իսկականը: Ո՞վ է իմանում. ինչ լեռներ, ինչ թագաւորութիւններ են բաժանում մեզ միմեանցից: Ո՞վ է իմանում, թէ ինչեր կարող են պատահել: Կարելի է այժմ, հէնց այժմ, նրան շրջապատում են նրա պաշտողները, այն ինչ ես այս աշտարակում, ինչպէս մի գերի, միայն նկարած պատկերի պաշտելովն եմ բաւականանում:

Արքայազնը վճռեց:

—Ես կը թողնեմ այս ատելի բանտ դարձած պալատը և, ինչպէս սիրոյ մի ուխտաւոր, ոտի տակ կը տամ աշխարհը և կը գտնեմ նրան:

Իսկ աշտարակից ցերեկով փախչելը, երբ ամենքը հսկում էին նրա վրա, շատ էլ հեշտ բան չէր. այդ աւելի կարելի էր գիշերը գլուխ բերել, քանի որ ամրոցը շրջապատուած էր փոքրաթիւ պահապաններով: Ոչ ոք չէր կարող ենթադրել, որ արքայազնը կարող է փախչել, մանաւանդ, որ նա վարժուած էր այդ գերութեանը:

Բայց ինչպէս սիրտ անել փախչելու, երբ չը գիտես երկիրը, չը գիտես ուր գիմել: Նա մտաբերեց բուին, որ վարժուած էր գիշերով մէկ տեղից միւս տեղ թռչելու և կարող էր գիտենալ բոլոր ծածուկ ուղիները ու շաւիղները: Երբ գտաւ այդ մենաւորին, նա մանրամասն հարցեր տուեց նրան երկրի դիրքի և շրջակայքի մասին: Բայց պատասխանելուց առաջ բուն դեռ մի հպարտ և խորհրդաւոր հայեացք ձգեց արքայազնի վրա:

—Դու, արքայազն, պէտք է գիտենաս, որ մենք՝ բուերս ծագում ենք հին զարմից, հարուստ նախահայրերից, որ մենք իշխում ենք ամրոցների և պալատների աւերակների վրա և բնակվում ենք Իսպանիայի բոլոր կողմերում: Չը կայ մի աշտարակ լեռան վրա, մի բերդ՝ հարթութեան վրա, մի հին միջնաբերդ՝ քաղաքներում, ուր մենք եղբայր, հօրեղբայր, մի այլ ազգական չունենանք, և այդ իմ բազմաթիւ ազգականներիս այցելելու համար ես թռել, ոտի տակ եմ տուել բոլոր անկիւնները ու խորշերը, այո՛, այս երկրում չը կայ մի ծածուկ տեղ, որ ինձ անյայտ լինի:

Արքայազնը գլուխը միանգամայն կորցրեց ուրախութիւնից, երբ գտաւ, որ բուն այսպէս հմուտ է տեղագրութեան մէջ, ուստի, յայտնելով նրան իւր ցաւը և փախուստի մտադրութիւնը, համոզում՝ խնդրում էր նրան իւր ուղեկիցը և խորհրդատուն լինել:

—Կորիր գլխից, պատասխանեց բուն տհաճութեամբ, դու մի՛թէ ինձ այն թռչուններից ես համարում, որ սիրային լուրեր տանել բերելով են զբաղուած։ Եւ ի՞նչպէս համարձակուեցիր ինձ մի այդպիսի առաջարկութիւն անելու, երբ գիտէիր, որ իմ բոլոր ժամանակը լուսնի մասին խորը մտածութիւններին է նուիրուած։

—Մի՛ վիրաւորուիր, իմաստնագոյնդ բուս,—ասաց արքայազնը,—մի կարճ ժամանակով, խնդրում եմ, հրաժարուիր լուսնի մասին մտածութիւններիդ և օգնիր ինձ փախուստի գործում, և դու կը ստանաս, ինչ որ քո սիրտը կը ցանկանայ։

—Ես ոչնչի պակասութիւն չունիմ,—պատասխանեց բուն,—մի չնչին մկնիկ բաւական է ինձ, որ կուշտ ճաշած լինիմ, և այս պատի ճեղքը բաւական ընդարձակ է իմ ուսումնական պարապմունքներիս համար, իսկ դրանից աւելին ի՞նչ հարկաւոր է ինձ պէս մի փիլիսոփային։

—Մտածիր, ով ամենագէտ փիլիսոփայ, որ նստելով քո խուցի մէջ և անդադար նայելով լուսնին՝ քո ձիրքերը անյայտ են մնում աշխարհին։ Ժամանակով ես թագաւոր պիտի լինիմ և կը կարողանամ քեզ մեծ աստիճանների և պատիւների հասցնել։

Բուն, որպէս փիլիսոփայ, թէ և առանձին նշանակութիւն չէր տալիս աշխարհային մանր հաճոյքներին, այնուամենայնիւ վճռեց ուղեկցել արքայազնին, առաջնորդել և խորհրդատու լինել նրան ճանապարհորդութեան միջոցում։

Սիրահարի նախագիծն իսկոյն և եթ կատարուած էր։ Արքայազնը ժողովեց իւր թանկագին իրերը, որպէս զի ճանապարհորդութեան մէջ գումարի պակասութիւն չունենայ, և հէնց նոյն գիշերն և եթ իւր գոտու միջոցով վայր իջաւ աշտարակի պատշգամբից, անցաւ ֆեներալյֆայի պատի վրայից և բուի առաջնորդութեամբ, դեռ լոյսը չը բացուած, լեռների վրա էր արդէն։ Այստեղ մտադրուեց համաձայնութիւն կայացնել բուի հետ ապագայում իւր բռնելիք ճանապարհորդութիւնների նկատմամբ։

—Ես խորհուրդ եմ տեսնում նախ լինել Սեվիլյայում,—ասաց նրան բուն։ Պէտք է գիտենալ, որ մի քանի տարիներ առաջ ես այցելեցի այդտեղ իմ ազգականուհուս, որը թէ մեծ ոյժ և թէ մեծ նշանակութիւն ունէր և որը Ալիկազարի աւերակներումն էր բնակվում։ Քաղաքի վրայից գիշերը թռչելով՝ ես մէկ առանձնացած աշտարակում լոյս նկատեցի։ Վերջապէս ես նստեցի նրա ամրութիւններից մէկի վրա և պարզ տեսայ, որ լոյսը արաբացոց մէկ կախարդի ճրագն էր արձակում։ Նա թաղուած էր հմայողական գրքերի մէջ, իսկ նրա ուսի վրա նստած էր նրա անբաժան ընկերը պառաւ ագռաւը, որին բերել էր Եգիպտոսից։ Ես ծանօթ եմ այդ ագռաւի հետ և իմ այժմեան

գիտութիւններիս մեծ մասը դրան եմ պարտական։ Ձեռնահմայն այժմ մեռած է, իսկ ագռաւը հիմա էլ աշտարակումն է ապրում։ Այդ թռչունները երկարակեաց են լինում։ Ես խորհուրդ կը տայի քեզ գտնել այդ ագռաւին, մանաւանդ, որ նա թէ վիճակ է բանում և թէ նախագուշակում է, բացի այդ՝ տեղեակ է դիւթական գործերում, որովհետև բոլոր ագռաւները, առաւել եգիպտականը, շատ նշանաւոր են այդ գիտութեան մէջ։

Արքայազնը՝ հիացած այդ իմաստուն խորհրդից՝ ուղղվեց դէպի Սեվիլլա։ Նա իւր առաջնորդի յարմարութեան համար գիշերներն էր ճանապարհորդում, իսկ ցերեկով հանգստանում էր մութ քարանձաւներում կամ աւերակ աշտարակների մէջ։ Բուն հմուտ էր այդ տեսակ գաղտնի խորշեր գտնելում, որովհետև մի ամենագէտ հնագէտ էր աւերակների մասում։ Վերջապէս մի օր, արևը մայր մտնելու ժամանակ, հասան Սեվիլլա, իսկ բուն, որովհետև խորշում էր լոյսից և աղմկալի փողոցներից, անցաւ քաղաքի դռներից միւս կողմը և տեղաւորուեց մի ծառի փուչակում։

Արքայազնը մտաւ քաղաքը և իսկոյն գտաւ կախարդի աշտարակը, որը քաղաքի միւս շինութիւններից աւելի բարձր էր, քան անապատի արմաւենին միւս թփերի նկատմամբ։ Դա նոյն այն աշտարակն էր, որը այժմ էլ կանգուն, Ժիրալդի անունն է կրում, որը մաւրերի յայտնի աշտարակն է Սեվիլլայում։ Արքայազնը ոլորապտոյտ սանդուղքներով ելաւ աշտարակը, ուր գտաւ կախարդ ագռաւին՝ այդ խորհրդաւոր թռչունին, որը իւր ալեզարդ գլխով, թանձր փետուրներով, կորացած դրութեամբ մի ուրուականի էր նմանում։ Ոտի մէկը ծալած, մի աչքով, խոժոռ հայեացքով նայում էր գծերին, որ նրա առաջ գծուած էին յատակի վրա։ Այդ գիտնականի անընական դէմքից թեւլադրուած, արքայազնը, ահ-դողը սրտում, յարգանքով մօտեցաւ ագռաւին։

—Թոդ ների ինձ իմաստուն և նշանաւոր ագռաւը,—բացականչեց արքայազնը,—որ ես համարձակութիւն ունեցայ խանգարել ողջ աշխարհին յայտնի նրա պարապմունքները։ Դու քո առաջ տեսնում ես մի սիրահարի, որ կարօտում է քո խորհրդին՝ այն է, թէ ինչ հնարքով ստանալ, տիրել կարելի է իւր սիրոյ առարկային։

—Այլ խօսքով,—ասաց ագռաւը խորհրդաւոր հայեացքով,—դա նշանակում է, որ դու ուզում ես փորձել իմ հմտութիւնը ձեռնահմայութեան մէջ։ Մոտեցիր, ցոյց տուր ձեռքդ և թոյլ տուր ինձ լաւ նայել բաղդի խորհրդաւոր գծերը։

—Ներումն եմ խնդրում,—ասաց արքայազնը,—ես չեկայ նրա համար, որ փորձեմ վիճակի որոշումները, որոնց մահկանացուների աչքից ծածկել է Ալլահը։ Ես սիրոյ ուխտաւոր եմ և պտրում եմ միայն իմ սիրոյ առարկային։

—Բայց ինչպէս չը գտնել նրան կախարդիչ Անդալուզիայում,—ասաց Ծերունի ագռաւը, ձգելով նորից մի կական Հայեացքը: Ի՞նչպէս չը գտնել նրան աշխոյժ Սեվիլլայում, ուր իւրաքանչիւր կիտրոնի ծառի տակ պար են խաղում սևաչեայ գեղանիները:

Արքայազնի երեսը շառագունեց ամօթխած կարմրութեամբ, նա շփոթուեց, երբ սիրոյ մասին մի ոտը գերազմանում Ծերունի ագռաւի բերանից լսեց այս ազատ արտայայտութիւնը:

Հաւատա ինձ,—ասաց նրան լրջութեամբ արքայազնը,—ես ձեր ընդունած այն աստանդական թափառականներիցը չեմ, Անդալուզիայի սևաչեայ այն գեղեցկուհիները, որոնք պարում են Գվադալկվիվիրի կիտրոնիների տակ, ինձ համար չեն ստեղծուած: Ես պտրում եմ անյայտ, բայց անմեղ գեղեցկուհուն, ահա, այս պատճէնի իսկականին, և աղերսում եմ քեզ, ով ամենակարող ագռաւ, եթէ քո տեղեկութիւնների և քո խորհրդաւոր գիտութեան սահմանից դուրս չէ գտնվում այդ, սովրեցրո՛ւ ինձ, թէ որտեղ կարող եմ գտնել նրան:

Սպիտակահեր ագռաւին շատ էլ դիւր չեկաւ արքայազնի այս գոռոզութիւնը:

—Գեղեցկութեան և երիտասարդութեան մասին գիտենալը իմ ինչ գործն է,—պատասխանեց նա սառնութեամբ: Ես այցելում եմ հին ու զառամեալներին, չէ թէ ողջ և առողջներին, ես որ

կամ—ճակատագրի կարապետն եմ և տանիքի վրայից իմ կղկղալով հիւանդին մահ եմ գուշակում... Ո՛ւ անճանօթ գեղեցկուհու մասին լուրերը գնա այլ տեղ պտրելու:

—Բայց ո՞րտեղ կարող եմ պտրել, թողած իմաստութեան զաւակներին, որոնք թափանցել են մահկանացուների ճակատագրական գրքերը: Ես ինքս թագաւորի որդի եմ, իմ ճակատագրի ղեկավարողը աստղերն են, նրանք առաջնորդում են ինձ դէպի այն խորհրդաւոր ձեռնարկութիւնը, որից կախուած է ամբողջ թագաւորութեան վիճակը:

Երբ ագռաւը լսեց այս խորհրդաւոր ձեռնարկութեան մասին և այն, որ աստղերն են ղեկավարում նրա վիճակը, իսկոյն փոխեց ձայնն ու վարուելու եղանակը և մինչև վերջ խորին ուշադրութեամբ լսեց արքայազնի պատմութիւնը: Նրա աւարտելուց յետոյ ասաց.

—Այդ արքայադստեր մասին խրատել ինքս չեմ կարող, խորհուրդ եմ տալիս շտապել Կորդովա քաղաքը և գտնել ամենամեծ մեչեդի բակում Մեծն Աբդուրահմանի արմաւենու ծառը: Այդ ծառի վրա դու կը գտնես ամենանշանաւոր ճանապարհորդին, որ ողջ երկիրս պտտել, արքունիքներում գտնուել և սէր է վայելել բոլոր արքայազուններից և արքայադուստրներից: Եւ նա քեզ ցոյց կը կտայ նպատակիդ հասնելու ուղիղ ճանապարհը:

—Շնորհակալ եմ քեզնից քո թանկագին

խորհուրդներիդ համար, ներիր, մեծդ Հեռնա-
համայդ,—ասաց արքայազնը։

—Մնաս բարեաւ, Սիրոյ Ուխտաւոր,—ասաց նրան սառնութեամբ ագռաւը,—և նորից աչքը սևեռեց երկրաչափական գծերին։

Արքայազնը դուրս եկաւ Սեվիլլայից, վերցրեց իւր հետ բուին—իւր ուղևորութիւնների առաջնորդին—որ դեռ ևս նստած էր ծառի խոռոչում, և ուղևորուեց դէպի Կորդովա քաղաքը։

Նա Գվադալկվիվիրի սքանչելի ափերով, նարինջենիների և կիտրոնիների անտառներն ու այգիները անցնելով, մօտեցաւ քաղաքին։

Երբ հասան քաղաքի դարպասներին, բուն քաղաքի պարսպում մի մութ խորշ գտաւ և նրա մէջ թաք կացաւ, իսկ արքայազնը գնաց արմաւենու ծառը գտնելու, որին մին ժամանակ տնկել էր Մեծն Աբդուրահմանը։

Ծառը մեչեդի ընդարձակ բակի մէջ կանգնած՝ նարինջենիների և կիտրոնիների միջից բարձր նայում էր իւր շուրջը։

Բակի շուրջը բոլորած, նստած էին դերվիշները ու ֆակիրները, որոնցից աւելի բարեպաշտները մեչեդը մտնելուց առաջ լուացվում էին շատրուանների մօտ։

Ծառի տակ ամբոխը խմբուած լսում էր մէկին, որ մեծ հմտութեամբ խօսում էր իւր ունկնդիրների հետ։

—Ահա,—ասաց ինքն իրան արքայազնը,—այն ճանապարհորդը, որ կարող կը լինի յայտնել ինձ անծանօթ արքայադստեր մասին։

Նա մտաւ ամբոխի մէջ, բայց շատ էլ զարմացաւ, երբ տեսաւ, որ խօսողը մի թութակ է, որն իւր կանաչ փետուրներով, սուր, թափանցող աչքերով և գլխի խոպոպիկով բաւական յայտնի թռչուն էր համարվում։

—Ի՞նչ է պատճառը,—ասաց արքայազնը, գիմելով շրջապատողներից մէկին,—որ այսքան պատուաւոր անձեր հաւաքուած բաւականութեամբ լսում են թութակի շատախօսութեան։

—Դուք չը գիտէք, թէ ո՛ւմ մասին էք խօսում, պատասխանեց ունկնդիրներից մի ուրիշը։ Այս թութակը պարսից հռչակաւոր թութակի զարմիկն է, որ իւր ձիրքերով և պերճախօս պատմութիւններով յայտնի պատմիչ է համարվում։ Արևելքի ամբողջ իմաստութիւնը նրա լեզուի ծայրին է գտնվում և մինչև իսկ կամեցածիդ պէս արագ ոտանաւորով կարող է խօսել։ Նա եղել է զանազան արքունիքներում և ամենուրէք ընդունել են նրան, որպէս գիտութեան պատգամի։ Նա սիրելի է եղած և գեղեցիկ սեռի աչքում, մանաւանդ զարմանալի, երբ գիտնական թութակը ոտանաւոր բանաստեղծութիւններով է խօսել։

—Բարի է,—ասաց արքայազնը,—ես կաշխատեմ այդ նշանաւոր ճանապարհորդի մօտ մաս-

նաւոր այցելութիւն ունենալ։

Երբ մասնաւոր ընդունելութեան արժանացաւ, նա պատմեց թութաքին իւր ուղևորութիւնների պատճառը, և հազիւ թէ վերջացրել էր խօսքը այդ մասին, որ թութակը այլ ևս չը կարողացաւ զսպել իւր ծիծաղը։ Եւ այդպէս, մինչև արտասուքների վազելը ծիծաղում էր նա։

—Ների՛ր ինձ, արքայազն,—ասաց թութակը,—բաւական է մի ամենափոքր լիշողութիւն սերոյ մասին, որ ես չը կարողանամ զսպել իմ ծիծաղը։

Արքայազնը վիրաւորուեց նրա անժամանակ և անտեղի այդ զուարճախօսութիւնից,

—Բայց մ՛թէ սէրը բնութեան մեծ գաղտնիքը չէ։ Մ՛թէ կեանքի սկիզբը չէ նա, մ՛թէ համաշխարհային համակրութիւնը չէ։

—Թողէ՛ք, թողէ՛ք,—կոչեց թութակը, ընդհատելով նրա ճառը,—ասա՛, խնդրեմ, ո՛վ է սովորեցրել քեզ այդ զգացուած շատախօսութիւնը։ Հաւատա՛ ինձ, սէրն արդէն նորութիւն լինելուց վաղուց դադարել է. բարձր շրջաններում այդ մասին այլ ևս մի խօսք չէք լսիլ։

Արքայազնը հառաչեց և մտաբերեց աղաւնուն։

Բայց այս թութակը,—մտածեց նա,—արքունիքներումն է ապրել, նրանց մտածութեան եղանակին է վարժուած և պալատականների սովորութիւններով է վարակուած և այդ պատճառով չը գիտէ՝ ինչ է սէրը։

Իւր զգացմունքների մասին, որոնցով լցուած էր նրա սիրտը, այլ ևս չը կամենալով խօսակցութիւնը շարունակել, նա դիմեց թութակին հարցերով, որոնք իւր այցելութեանն էին վերաբերում։

—Այո՛ ինձ, ո՛վ ամենագիտուն թութակ, դու, որ ընդունուած ես եղել բոլոր գեղեցկուհիների խորհրդաւոր գաղտնարաններում, ասա՛ ինձ, պատահե՞լ է քեզ քո ուղևորութեան ժամանակ իսկականն այս պատկերի։

Թութակը վերցրեց ճանկերի մէջ այդ կենդանագիրը, մի կողմից միւս կողմը շուռ տուեց գլուխը և երկու աչքերով հետաքրքրութեամբ զննեց նրան երկար։ Ձիշտ որ, ասաց նա, շատ գեղեցիկ դէմք է, սակայն ճանապարհորդութեան ժամանակ այնքան գեղեցիկ դէմքերի ես պատահում, որ գժուար կարող ես լիշել նրանց։ Բայց սպասի՛ր, ես լիշեցի. ճիշտ որ սա՛ նա է, սա արքայադուստր Ալիզեհոնդան է։ Եւ ինչպէս կարողացայ մոռանալ նրան, որն ինձ այնքան անգամ փաղաքշել է։

—Արքայադուստր Ալիզեհո՛նդա,—կրկնեց արքայազնը,—բայց որտեղ գտնել նրան։

—Մի՛ շտապիր։ Նրան գտնելն աւելի հեշտ է, քան թէ ձեռք բերելը։ Նա Տօլեդօ քաղաքի քրիստոնեայ թագաւորի միակ դուստրն է և աստղագէտների քանի մէկ գուշակութիւններով մին-

չև տասն և եօթը տարեկան հասակը՝ ծածկուած է աշխարհից։ Նա քեզ չի կարող տեսնել, և մահկանացուներից ոչ ոք նրան նոյնպէս տեսնել չի կարող։ Ինձ միայն թոյլ էր տրուած նրան զբաղեցնել խօսակցութեամբ և, հաւատացնում եմ քեզ թուխթակի ազնիւ խօսքով, որը թռել է ամբողջ աշխարհիս շուրջը, որ ես այնպիսի արքայադուստրների հետ եմ խօսել, որոնք գերազանցել են դրան իրանց լիմարութեամբ։

—Թոյլ տո՛ւր ինձ, սիրելիդ իմ թուխթակ, իմ գաղտնիքներին մասնակից անել քեզ։ Ես թագաւորութեան ժառանգն եմ և ժամանակով գահ պիտի բարձրանամ։ Տեսնում եմ, որ դու գլխիդ մէջ խելք ունես և աշխարհից տեղեկութիւններ։ Օգնի՛ր ինձ, որ կարողանամ տիրանալ արքայադստեր, և ես իմ արքունիքում բարձր պաշտօնի կը հասցնեմ քեզ։

—Ուրախութեամբ,—պատասխանեց թուխթակը,—բայց տո՛ւր այնպիսի պաշտօն, որն ինձ թօշակի կարողանայ հասցնել, որովհետև մենք՝ ուսումնական թուխթակներս՝ չենք սիրում պարապելը։

Իսկոյն ամեն ինչ կարգի դրուեց։ Արքայազնը Կորդովայից ուղղուեց դէպի այն գաղաքը, որով մտել էր քաղաքը, ձայն տուեց, կանչեց բուին իւր խորշից, ներկայացրեց նրան իւր նոր ուղեկցին՝ գիտութեան պաշտօնակցին՝ և բոլորը միասին ընկան ճանապարհ։

Նրանք, արքայազնի անհամբերութեան հակառակ, շատ դանդաղ էին շարժվում։ Թուխթակը, բարձր շրջանի սովորութիւններին վարժուած, չէր կարողանում վազ զարթնելով իրան անհանգստացնել։ Իսկ մեւս կողմից էլ բուն քաղցր քուն էր վայելում և կէսօրներից յետոյ էլ անձնատուր էր լինում երկար հանգստութեան։ Բացի այդ, հնութիւնների մասին նրա սէրն ամեն տեղ իրան համար պարապմունք էր գտնում, այնպէս որ, որտեղ մի աւերակի պատահէր, կը խնդրէր կանգնել նրան դիտելու և կը սկսէր մի որ և է ամրոցի և աշտարակի մասին աւանդութիւնների իւր երկար պատմութեամբ զբաղեցնել ընկերներին։ Արքայազնն անպէս էր կարծում, որ բուն և թուխթակն, ինչպէս ուսումնական անձնաւորութիւններ, իրար հետ հաշտ բարեկամներ կը լինին, սակայն շատ սխալուած էր։ Նրանք անդադար միմեանց հայհոյում էին։ Մէկը գիտուն էր համարվում, միւսը՝ փիլիսոփայ։ Թուխթակը բանաստեղծութիւններ էր կարդում, նոր հեղինակութիւններն էր քննադատում և բաւականաչափ պերճախօս էր իւր կարծիքները յայտնելում։ Բուն, ընդհակառակն, այդ բոլորը մանր-մունր բաներ էր համարում և բացի մետաֆիզիքայից ոչնչով չէր պարապում։ Թուխթակը երգեր էր երգում, իւր ուղեկցի վերաբերութեամբ հեգնութիւններ էր անում, ծիծաղում էր իւր սեպհական խելքի վրա, իսկ բուն

այդ բոլորը ծանր վիրաւորանք էր համարում իւր դէմ, ունքերը կիտում, ուռչում, փքվում էր և ամբողջ օրերով մի բառ չէր արտասանում:

Արքայազնը, իւր երևակայութիւնների մէջ խորասուզուած, չքնաղ արքայադստեր պատկերին էր նայում և չէր էլ նկատում իւր ընկերների հակառակութիւններից ծագած տրտունջները:

Այսպէս շարունակեցին նրանք իրանց ճանապարհը Սիերրա-Մօրենայի վայրենի ժայռերի վրայով, անցան Լամանշի և Կաստիլիայի տօթագին հարթութիւնները և դժուար անցանելի ափերը ոսկեայ Տաղօ գետի, որը դիւթական օձապտոյտներով հոսում է Իսպանիայի և Պօրտուգալիայի միջով: Վերջապէս տեսան ամրակառոյց քաղաքը, իւր շրջապատող պատնէշներով և աշտարակներով, Հրուանդանի ժայռի վրա կառուցած, որի ստորոտը իւր հժկու և կատաղի յորձանքներով քերելով անցնում էր Տաղօ գետը:

—Ահա՛ քաղաքը,—բացականչեց բուն,—ահա՛ քեզ փառաւոր Տօլեդօ քաղաքը իւր նշանաւոր հնութիւններով: Ահա՛ նրա ծերունափառ գմբէթները և մեծափառ աշտարակները, ահա՛ այն քաղաքը, որտեղ մտածել են շատերն իմ նախորդներից:

—Դէհ, ժամանակ գտար սքանչանալու,—ազաղակեց թուխթակը և ընդհատեց հնութիւնների մասին նրա փառաբանութիւնները: Մեր ինչքն են պէտք քո հնութիւնները, հոյակապութիւնը և

նախորդները: Նրան նայենք, ինչ մեր ուղևորութիւնների նպատակն է կազմում: Նայենք այժմ այն տեղին, ուր գեղեցկուհիներն ու երիտասարդուհիներն են բնակվում, նայենք, վերջապէս, ո՛վ արքայազն, այն բնակարանին, որտեղ արքայադուստրն է ապրում, նա՛, որին այնքան վաղուց դու որոնում ես:

Արքայազնը նայեց թուխթակի ցոյց տուած կողմը և տեսաւ կանաչազարդ հարթութեան վրա, Տաղօ գետի ափին, չքնաղ այգու մէջ, հոյակապ պալատ, այն պալատը, որի մէջ աղաւնու նկարագրած պատկերի իսկականն էր կենում: Այդ պալատին նայելիս սաստիկ բաղխում էր նրա սիրտը: Կարելի է այդ րոպէին, այն ծառերի ստուերում, արքայադուստրն անձնատուր է եղած զուարճութեան կամ զբօսնում է այն գեղեցիկ պատշգամբներում, կամ հանգստանում է այդ բարձր կամարների տակ: Մօտենալով ամրոցին, նա նկատեց, որ այգու շրջապատող պարիսպները բաւական բարձր էին և որ նրանց շրջապատել էին բազմաթիւ զինուորուած պահապաններ:

Արքայազնը դարձաւ դէպի թուխթակը:

—Ո՛վ թևաւորներից ամենակատարելագոյնդ, խօսալու շնորհքին դու քոլ տիրում ես: Շտապիր այգին, գտիր հոգուս աստուածուհուն, ասա՛ նրան, որ Ահմեդ արքայազնը, սիրոյ ուխտաւորը, աստղերից առաջնորդուած, ժամանել է Տաղօ գետի ծաղկա-

փթիթթ ափերը։

Թուխթակը հպարտացաւ այսպիսի մի պատգամաւորուհեամբ և իսկոյն թռաւ այգին, անցաւ նրա բարձր պարիսպների վրայով և, անտառի օդում փոքր ինչ լողալուց յետոյ, վայր իջաւ և նստեց պատշգամբի վրա։ Պատուհանից նա տեսաւ, որ արքայադուստրը, բարձին յենուած, բռնած էր թուղթը և անթարթ նայում էր նրան, իսկ մեւս կողմից արտասուքները կաթիլ-կաթիլ այդ ժամանակ հոսում էին նրա այտերով։

Մաքրելով իւր թեւերը, ուղղելով փետուրները, թափահարեց նա իւր ցցունազարդ գլուխը և ցուցամոլի պճրանքով թռաւ ներս, սենեակը, և, նստելով արքայադստեր սնարին, խօսեց քնքշաբար։

—Սրբիր արտասուքներդ, ով իմ չքնաղ արքայադուստր, ես մխիթարուհիւն եմ բերել սրտիդ։

Արքայադուստրը, լսելով այդ ձայնը, զարմացաւ, բայց շուռ գալով չը գտաւ ոչ ոքի, բացի շատախօս կանաչ թուխթակից։

—Ա՜խ, ինչ բանով կարող ես դու մխիթարել ինձ, և մի՞թէ կարող է թուխթակն ինձ մխիթարուհիւն բերել։

Թուխթակը վիրաւորուեց այդ հարցից։

—Նապելիններից շատերն են ինձնից մխիթարուհիւն գտել,—ձչնչաց նա,—բայց թո՛ղ այդպէս լինի։ Ես թագաւորի որդու կողմից որպէս պատգամաւոր եմ ուղարկուած քեզ մօտ։ Ա.Համեդը,

Գրանադայի արքայազնը, այստեղ քեզ մօտ է և արդէն ծաղօ գետի ծաղկող ափումն է իջևանած։

Այս խօսքերից գեղեցկուհու աչքերը իւր թագի ադամանդից աւելի պայծառ գոյնով սկսեցին շողալ։

—Ո՜վ թուխթակներից ամենասիրելիդ,—կոչեց նա,—որքան ուրախալի են ինձ քո բերած լուրերը։ Ես տանջուել, վհատուել էի, համարեա հոգեվարք դրուխեան էի հասել Ա.Համեդի հաւատարմուխեան մասին առաջացած կասկածներից։ Թռիր դարձեալ դէպի նա, ասա՛ նրան, որ նրա նամակի խօսքերը տպաւորուած են խոր իմ սրտում, որ իմ հոգու սնունդ տուողը միայն նրա պօէզիան է։ Ասա՛ նրան և այն, որ նա իւր սէրը դէպի ինձ պիտի իւր զէնքի ուժովը հաստատի։ Վաղը լրանում են իմ տասն և եօթը տարիքս, և հէնց վաղը թագաւորը, իմ հայրս, մեծ նիզակահանդէս է տալիս, ուր մրցելու համար շատ արքայազուններ են հրաւիրուած։ Իմ ձեռքս կը ստանայ յաղթողը։

Թուխթակը բացեց լայն իւր թեւերը և անտառի վրայով թռաւ, հասաւ արքայազնին, որն անհամբեր սպասում էր այդ վերադարձին։

Արքայազնի ուրախուխիւնը,—այն բոլորից յետոյ, որ կարողացաւ գտնել իւր աստուածացրած պատկերի իսկականը, որ գտաւ նրան կրկին հաստատ և հաւատարիմ,—կարող էր հասկանալ այն բաղդաւոր մահկանացուն, որին կը յաջողուէր մար-

մնացած տեսնել երազականը և ստուերին կեանք շնորհել: Միայն մի հանգամանք ծանրացնում էր նրա դրութիւնը—նիզակահանդիսի որոշումը:

Տաղօ գետի եզերքը փայլում էին արդէն զէնքերով և բարձրաձայն հրաւէր կարդում թէ փողերի հնչիւններով, թէ Տօլեդօի զինախաղութեան սպասող ասպետների ձայներով:

Նոյն աստղը, որ ղեկավարում էր արքայազնին, նոյնը և տնօրինում էր արքայադստեր վիճակը, որ մինչև տասն և եօթը տարեկան հասակը, սիրոյ կրքից պաշտպանուած լինելու համար, ծածկուած էր մնացել աշխարհից: Բայց նրա բանտարկութիւնը ոչ թէ նսեմացրել, այլ աւելի մեծ փայլ էր տուել նրա գեղեցկութեանը: Շատ նշանաւոր արքայազուններ կային նրա ձեռքը և սէրը որոնող, սակայն նրա խորամանկ ծնողը, չը կամենալով թշնամիներ վաստակել իւր ընտրութեամբ կամ իւր հաւանածին փեսայացնելով, այդ թողեց վճռել զէնքի վիճակին: Ծողովուած ասպետներից շատերը հռչակուած էին ուժով և համարձակութեամբ: Սակայն մրցիսի դժբաղդութիւն էր այդ չարաբաստ Ա.Հմեդի համար, որ ոչ զէնքի գործածութիւնը գիտէր և ոչ ասպետական կանոնները:

—Ո՛րչափ անբաղդ եմ ես,—ասում էր նա,—որ ինքս բանտարկուած և այն էլ փիլիսոփայի ձեռքի տակ մեծացայ: Ի՞նչի են պէտք այժմ սիրային գործում ալգեբրան և փիլիսոփայութիւնը: Ա՜խ,

Էբէն-Բօնաբէն, ինչո՞ւ չը սովորեցրիր ինձ զէնքի գործածութիւնը:

Այս խօսքերից բուն ընդհատեց իւր լռութիւնը, բայց խօսալուց առաջ դեռ մի ազօթեց, որովհետև բաւական բարեպաշտ մուսուլման էր:

—Ալլահ Ագպեար—մեծ է Աստուածը, բացականչեց նա: Նրա ձեռքումն են գտնվում խորհրդաւոր գաղտնիքները: Նա է միայն սահմանում արքայազուններէի վիճակը: Իմացիր, Ա.Հմեդ, որ այս աշխարհս լի է խորհրդաւոր գաղտնիքներով և ծածկուած բոլոր մահկանացուներից, բացի միայն նրանցից, որոնք ինձ պէս, մթութեան մէջ խարխափելով, գիտութիւն են որոնում: Գիտացիր, որ Հարևան լեռան մէջ մի քարայր կայ, այդ այրում մի սեղան, սեղանի վրա դրուած են կախարդուած զէնքերը, իսկ սեղանի մօտ մի թամքած ձի, և այդ ամենը մի քանի սերունդներից առաջ փակուած է այդ այրում: Արքայազնը մնաց զարմացած, իսկ բուն, իւր մեծ կոլոր աչքերը փայլեցնելով և ցնցուղը շարժելով, շարունակեց:

—Մի քանի տարի առաջ հօրս հետ իմիասին ուղևորուեցի այդ կողմերը, ուր բնակութիւն ձգելով մնացինք այդ քարանձաւում: Ա՜հ թէ որտեղից գիտեմ այդ պահուած իրերի մասին: Մեր տոհմում վաղուց ի վեր աւանդութիւն կայ, որը մանկութեանս օրերից լսած եմ իմ պապից, թէ այդ զէնքն ու զրահը պատկանում էին մի արա-

բացի կախարդի, որը ծածկուած էր այս այրում, երբ Տալեդօ քաղաքին տիրում էին քրիստոնեաները: Այս այրում նա մեռնելու ժամանակ, դիւթական երդման ներքոյ, թողնում է ձին և զէնք ու զրահը, որ ոչ ոք իրաւունք չունենայ նրանց դիպչելու, բացի մուսուլմանից, որ այն էլ արեգակի ծագելուց մինչև կէսօր միայն կարող է գործ ածել: Միայն այդ ժամանակ նրանից օգտուողը կարող է յաղթել Հակառակորդին:

— Իաւական է, գնանք դանենք այրը, բացականչեց Ա.Հմեդը:

Իր ամենագիտուն դաստիարակի առաջնորդութեամբ արքայազնն իսկոյն գտաւ այրը, որը Տօլեդօ քաղաքի շրջապատող ժայռերի մի ամենավայրենի ծերպի մէջ էր գտնվում: Միայն բուի և Հմուտ հնագէտի մկան աչքերը կարող էին նկատել քարայրի մուտքը: Գերեզմանային լամպարը իւր անշէջ ձիւթով սփռում էր այդ այրում իւր լոյսը: Երկաթեայ սեղանի վրա դրուած էին մոգական զրահը և տէգը, իսկ սրանից ոչ հեռու, ինչպէս արձան, անշարժ կանգնած էր թամքած արաբական նժոյգը: Զէնքերն այնքան մաքուր ու փայլուն էին, որ կը կարծէիր, թէ այդ օրը լինէին շինուած, իսկ նժոյգն այնպէս կուշտ, որ կասէիր, թէ բոլոր ժամանակ ուտելիս է եղել, և երբ Ա.Հմեդի ձեռքը դիպաւ նրան, ուրախութիւնից մի այնպէս խրխնջաց, որ քարայրի պատերը դողացին:

Եւ այսպէս, ձիով ու զէնքով զրահաւորուած, կազմ ու պատրաստ, արքայազնը վճռեց ներկայանալ պատուի դաշտում նշանակած զինախաղութեան:

Վերջապէս ցանկալի առաւօտը բացուեց: Զինախաղութեան տեղը Տօլեդօի պարիսպների ներքև, Վէգի դաշտումն էր նշանակուած: Հանգիսականների համար վրաններ և սրահներ էին շինուած, որոնք թանկագին գործուածքներով և մետաքսեայ վարագոյրներով պաշտպանուած էին արևից: Տեղական բոլոր գեղեցկուհիները ժողովուած էին այդ սրահներում, իսկ սրանց մօտ, իւրեանց մանկլաւիկներով և զինակիրներով, անց ու դարձ էին անում փեսուրաւոր սաղաւարտներով ասպետները: Նրանց մէջ յատկապէս աչքի ընկնողներն այն արքայազուններն էին, որոնք մտադիր էին մասնակցելու զինախաղութեան:

Իսկ երբ թագաւորի դուստրը, Ալիդեհոնդան, երևաց թագաւորական վրանում, բոլոր տեղական գեղեցկուհիները մնացին ապշած: Առաջին անգամից նա իւր վրա դարձրեց բոլոր բազմութեան հայեացքը:

Նրա աչք շլացնող գեղեցկութեան մասին զարմացական բացականչութիւններ էր, որ լսվում էր բազմութեան միջից: Նրա հրապոյրների ականատես ասպետներն աւելի ևս վառուեցին դէպի մեծամարտը:

Արքայադուստրը մտայոյզ նայում էր բոլո-

ըին: Նրա այտերը մէկ կարմրում էին, մէկ գունատվում: Նա աչքերն անյագ թափառում էին, նայելով ասպետների խմբին: Փողերի ձայներն արդէն պատրաստ էին զինախաղութեան նշանը տալու, որ յանկարծ մունետիկը յայտնեց անծանօթ ասպետի գալուստը և իսկոյն երևաց Վէգի դաշտում Ա.Հմեդը: Նրա իւր գլուխը չալմայի վրայից ծածկել էր թանկագին ակներով, զարդարուած պողպատեայ սաղաւարտով: Ողջ զրահը ոսկեհատ, կուրծքը պատած էր ոսկեհուռ լանջապանակով, դաշոյնը փայլում և շողշողում էր թանկագին քանդակներով: Կոլոր վահանը ձգած էր ուսովը, ձեռքին տէգը բռնած: Նրա արաբական նժոյգի թանկագին բանուածքը իւր երկարութեամբ գետնին էր հասնում: Ամեհի նժոյգը զէնքերի տեսքից փռնչում և խրխնջում էր ուրախ: Արքայազնի գեղեցիկ ու պարթև հասակը ամենքի հիացումն էր շարժել, և երբ իմացան նրա նշանաբանը—*Միրոյ ուխտաւոր*, իսկոյն մի ընդհանուր յուզմունք և շարժողութիւն նկատուեց սրահում նստող կանանց մէջ:

Հէնց որ Ա.Հմեդը մօտեցաւ մենամարտին, նրան կանգնեցրին, յայտնելով, որ բացի արքայազուններից ոչ ոքի չէ թոյլատրվում մասնակցել մենամարտութեան: Նա յայտնեց իսկոյն իւր անունն ու աստիճանը: Բայց դրանով բանն աւելի ծանրացաւ: Ինչպէս մուսուլմանի, նրան բոլորովին չէր

կարելի ոչ մենամարտին մասնակցել և ոչ քրիստոնեայ աղջկայ ձեռքը ստանալ:

Արքայազուն հակառակորդները շրջապատեցին նրան, հպարտ ու խիստ դէմքերով սկսեցին նայել նրան, իսկ Հերքուլէսի հասակով յանդուգն անամօթի մէկը սկսեց ծաղրել նրա նիհար կազմուածքը և նրա սիրալին նշանաբանը: Նրա այդ համարձակութեան վրա արքայազնը բորբոքուեց և մենամարտութեան կոչեց նրան: Հեռացան արշաւելով, սլացան միմեանց դէմ և սկսեցին մրցութիւնը, բայց կախարդական տէգի հէնց առաջին հարուածից թամքից գետին գլորուեց պարարտ ու գեր ծաղրածուն: Արքայազնը կամեցաւ իսկոյն վերջ տալ մրցութեան, բայց աւաղ, աշխարհումս ոչ մի բան չը կայ, որ կարողանայ կախարդական նժոյգին և զէնքին կանգնեցնել, երբ նրանք մի անգամ գործի են դրուած: Արաբական նժոյգը նետուեց ամբոխի ամենախիտ մասը, տէգը սկսեց հարուածել իւր առաջն ընկնող—պատահողին: Զին այդպէս թռցրեց նրան ողջ դաշտի երեսով: Արքայազնը պատահողին գետին էր տապալում և արդէն այդ սեպհական ակամայ յաղթութիւնների մասին խիղճը տանջում էր նրան: Թագաւորը, տեսնելով իւր հպատակներին և հիւրերին հասցրած այդ վիրաւորանքը, սաստիկ դժգոհ էր և բարկացած: Նա հրամայեց իւր ամբողջ պահապան գնդին խաղաղացնել այդ ասպետին:

Սակայն բոլորն էլ գետինն էին տապալվում, հէնց որ մօտենում էին նրան: Թագաւորը իւր վրայից մի կողմը ձգեց ծիրանին, վերցրեց վահանն ու տէգը և առաջ սլացաւ, այն նպատակով միայն, որ իւր մեծութեան ներկայութեամբ երկիւղ ազդի անճանօթ ասպետին: Բայց աւձղ, նրա մեծութիւնն անգամ ազատ չը մնաց միւսերի վիճակից. նժոյգն ու տէգը ոչնչի չէին նայում: Ա.Համեդի կամքի հակառակ, ամենի գազան նժոյգը մղեց նրան ուղիղ դէպի թագաւորը, և դեռ մի րոպէ չէր անցել, որ սա ոտերը ցից ընկած էր գետին:

Այդ ժամանակն էլ հէնց արեգակը հասաւ միջօրէին: Պիւթական Համայութիւնները կրկին իրանց ոյժը սկսեցին գործ դնել: Արաբական նժոյգը դաշտի միջով սրարշաւ թռաւ, անցաւ սահմանը, ձգեց իրան Տաղօ գետի մէջ, լողաց, անցաւ նրա կատաղի ալիքների միջով և շնչասպառ եղած զարմացած արքայազնին տարաւ այրը և նորից կանգնեց երկաթեայ սեղանի մօտ, ինչպէս մի արձան: Վիճակի որոշումներին հնազանդուելով, Ա.Համեդը վայր իջաւ ձիուց և հանեց վրայից զէնք ու զրահը: Նստելով այրում, նա ձիու և տէգի կողմից իրան հասած յուսահատ վիճակի մասին էր խորհում: Նա այլ ևս չը համարձակուեց երևալ Տօլեդօ քաղաքում, ուր բոլոր ասպետները, թագաւորին հասցրած վիրաւորանքի պատճառով գրգռուած, ապստամբել էին նրա դէմ: Արդեօք ինչ պիտի մտա-

ծի թագաւորի դուստրը նրա անվայել արարքների մասին: Վշտից տանջուած, նա ուղարկեց իւր փեսուրաւոր դեսպանին նոր լուրեր բերելու: Թուրթակը թռչելով մտաւ քաղաքի բոլոր հասարակական տեղերն ու ժողովարանները և բաւականաչափ լուրերով վերադարձաւ դէպի այրը: Ողջ Տօլեդօ քաղաքը վհատութեան մէջ էր, թագաւորի դստեր համարեա կէսամեռ դրութեան մէջ էին տարել արքունիքը: Մենամարտը աւարտած էր անկարգութեան մէջ: Ամեն տեղ հէնց այն էր խօսվում, թէ որտեղից յայտնուեց յանկարծ մուսուլման ասպետը, թէ ինչպէս գերազանցեց նա կռուի դաշտում և ինչպէս չը տեսնուած քաջագործութիւններից յետոյ չքացաւ նա մի տարօրինակ կերպով: Ամանք նրան արաբական կախարդ էին համարում: Միւսերը հաւատացնում էին, որպէս թէ նա մարդու կերպարանքով մի դև էր, իսկ մի քանիսն էլ լեռան այրում ծածկուած կախարդուած զօրքի մասին էին աւանդութիւններ պատմում և կարծում էին, որ նրանցից մէկը պիտի լինէր դա, բայց և այնպէս բոլորը համաձայն էին, որ դա մի անբնական մահկանացու պիտի լինէր, որ կարողացաւ այդպիսի հրաշքներ գործել և այդքան հմուտ ու քաջ քրիստոնեայ զօրքին գետին տապալել: Բուն ամեն երեկոյ թռչում էր քաղաք, մի փոքր այս, մի փոքր այն տանիքի վրա նստելուց յետոյ դիմում էր թագաւորական պալատը, որ Տօլեդօ քաղաքի

ժայռի գլխին էր, և այդտեղ բանձրավանդակների և ամրուձիւնների վրայից նայում էր լուսաւորուած լուսամուտներին, որով և վախեցնում ս-նաժիշներին։ Լուսաբացին միայն կրկին վերադառնում էր իւր գիշերային ուղևորութիւններից և պատմում արքայազնին բոլոր իւր տեսածն ու լսածը։

—Երբ ես պալատի ամենաբարձր աշտարակներից մէկի վրա նստած էի, աչքովս ընկաւ չքնաղ արքայադուստրը։ Նա ընկած էր բազմոցի վրա և, շրջապատուած նաժիշտներով ու բժիշկներով, նա ոչոքից ոչ մի օգնութիւն չէր ընդունում։ Երբ նրանք հեռացան, նա իւր ծոցից հանեց մի նամակ, սկսեց կարդալ, համբուրել և այնպէս բարձր հառաչանքներ արձակել, որ ես, թէև փիլիսոփայ, սրտաշարժուած քիչ էր մնում լացէի։

Այս լուրերի վրա Ահմեդի սիրտը կտոր-կտոր էր լինում։

—Այժմ հաւատացի քո խօսքերին, ով իմաստուն Էբէն-Հօնաբբէն,—բացականչեց նա,—միանգամայն հաւատացի, որ հոգսն ու վիշտը և անքնութիւնն են սիրահարների բաժինը։ Թող պահպանի Աստուած արքայադստեր այդ սիրուց։

Յաճախակի յարաբերութիւնները Տօլեդօ քաղաքի հետ հաստատում էին բուի բերած լուրերի ստուգութիւնը։ Քաղաքը շատ մեծ ալէկոծութեան և վրդովման մէջ էր։ Արքայադստեր տեղատուրել էին արքունական ամենաբարձր աշտարակներից

մէկում և բոլոր նրա անցն ու դարձը բռնուած էր պահապաններով։ Մաշող ու քայքայող մելամաղձ տխրութիւնն ամբողջովին տիրել էր նրան, և չը կար մէկը, որ հասու լինէր նրա ցաւին։ Նա հրաժարուեց կերակուրներից և այլևս ոչ մի մխիթարութիւն չէր ընդունում։ Փորձառու բժիշկներն այլևս ի գուր էին գործ դնում։ Ըրա վրա իրանց հմտութիւնները և վերջապէս եկան այն որոշման, թէ արքայադուստրը կախարդուած է։ Թագաւորը հրամայեց հրատարակել ամեն տեղ, թէ այն մարդը, որին կը յաջողուի բժշկել արքայադստեր, ամենաթանկագին ընծան կը ստանայ արքունական թանգարանից։

Բուն, իւր խորշում նստելիս, հէնց որ այս լսեց, էլ աւելի չուեց աչքերը, մի չըթեսնուած, խորհրդաւոր դէմք բռնեց։

—Ալլահ-Ագպեար,—բացականչեց նա,—երջանիկ է նրան բժշկողը, իսկ աւելի երջանիկ է նա, ով կը կարողանայ գիտենալ, թէ ինչը պէտք է ընտրած արքունական թանգարանից։

— Ի՞նչպէս ես կարծում, ինչը պէտք է ընտրել, ով հռչակաւորդ իմ բուս։

— Լսիր, արքայազն, թէ ինչ պէտք է ասեմ քեզ։ Նախ, դու պիտի գիտենաս, որ մենք՝ բուերս՝ ամենագիտուն արարածներ ենք և բոլորովին անձնատուր ենք մութ հետազօտութիւններին։ Մի անգամ, երբ ես թռչում էի Տօլեդօ քաղաքի գմբեթ-

ների և աշտարակների վրայով, հնագէտ բուերի մի ընկերութեան հանդիպեցի։ Սրանք իրանց ուսումնական պարապմունքների և վիճաբանութիւնների համար մի մեծ աշտարակի կամարի տակ էին ժողովուել, ուր պահում էին արքունական գանձերը։ Այստեղ նրանք ականակուռ և քանդակագործ պատկերների, ոսկեայ և արծաթեայ անօթների գանազան ձևերով ու արձանագրութիւնները դիտելով էին զբաղուած, որով և որոշում էին նրանց ո՛ր երկրի և ո՛ր դարի պատկանելը։ Բայց աւելի շատ նրանք մի քանի իրերի և յունական տառերի (թիլիսմ) քննութիւններով էին զբաղուած, որոնք գոթաց Ռոդրիկոսի ժամանակներից պահուած էին թագաւորական գանձարանում։ Այդ հազուագիւտ իրերի մէջ էր գտնւում և սանգալի փայտից մի արկղ—արևելեան ձեռագործ, պատած պողպատով և խորհրդաւոր տառերի անձանագրութիւններով, որոնք միայն գիտնականներին կարող էին մատչելի լինել։ Այդ արկղը և գրութիւնը մի քանի ժողովների նիստեր էին զբաղեցրել, երկար ու ձիգ վիճաբանութիւնների առարկայ դառնալով։ Իմ առաջին այցելութեանս ժամանակ մի հնագրեան ծերունի բուն, որ նոր էր եկել Եգիպտոսից, նստած արկղի վրայ, կարդում էր արձանագրութիւնը։ Նրա հետազօտութիւնից յայտնուեց, որ արկղի մէջ պահուած է Սողոմոն իմաստունի գահի գորգը, թէ, հաւանական է, որ այդ արկղը իւր

գորգով բերած լինեն այն հրէաները, որոնք Երուսաղէմի աւերումից յետոյ եկան ապաստանելու Տօլեդօ քաղաքում։

Հէնց որ բուն աւարտեց իւր պատմութիւնը հնութիւնների մասին, արքայազնը մտածմունքի մէջ ընկաւ։

— Ես իմաստուն Էբէն-Բօնաբբէնից,—ասաց նա,—լսել եմ այդ գորգի հրաշալուր յատկութեան մասին։ Դա Երուսաղէմի կործանումից յետոյ էր անյայտացել, և նրան կորած էին համարում։ Հաւանական է, որ նա Տօլեդօի քրիստոնեաների համար գաղտնիք էր մնացած։ Ես միանգամայն երջանիկ կը համարեմ ինձ, եթէ կարողանամ նրան ձեռք բերել։

Միւս օրը նա հանեց, դէն ձգեց իւր թանկագին հագուստները, հագաւ հասարակ անապատական արաբի շորեր, փոխեց մթնագոյն գոյներով իւր դէմքը, այնպէս որ տեսնողը երբէք չէր կարող ճանաչել, թէ սա այն գեղեցկատեսիլ գինուորականն է, որ գինախաղութեան մէջ զարմանքի և սարսափի առարկայ էր։ Մահակը ձեռքին, տէրողորմեան և հովուական սրինգը գոտիից կախած, նա մտաւ Տօլեդօ քաղաքը և կանգնեց արքունական պալատի դարպասների մօտ, յայտնելով, որ ինքն արքայադստեր բժշկելու և պարգևը ստանալու փափագողներից մէկն է։ Պահապանները, քիչ էր մնում, որ դռներից նրան փայտի հարուած-

ներով քշեին։

—Ի՞նչ կարող է անել թափառական արաբը,— ասում էին նրանք,— երբ աշխարհիս ամենահմուտ բժիշկներն անգամ ոչինչ չը կարողացան անել։

Սակայն թագաւորը, լսելով այդ աղմուկը, հրամայեց թողնել արաբին և անձամբ իրան ներկայացնել։

—Ջօրաւոր և հզօր տէր արքայ,—ասաց Ա.Հմեդը,—յայտնի է բոլորին, որ արաբական անապատները լիքն են դևերով և չար ոգիներով, որոնք յաղթահարում են մեզ—խեղճ հովիւներիս, վարակում են մեր հօտերը և կատաղութեան հասցնում մեր համբերատար ուղտերին։ Նրանց դէմ կռուելու միակ զէնքը մեր երաժշտութիւնն է, այն մի քանի երգերը, որոնք սերունդից սերունդ հասել են մեզ և որոնցով մենք հալածում ենք այդ չար ոգիներին։ Ես հմտութիւն ունիմ այդ երգերը երգելում և շնորհք ունիմ հալածելու այդ հզօր դևերին։ Եթէ քո աղջիկը հմայուած է այդ չար ոգիներից, ուրեմն գլխովս պատասխանատու եմ, որ ես կը բժշկեմ նրան։

Թագաւորը խելօք և տեղեակ անձն էր։ Նա գիտէր, որ արաբները հրաշալի թիլիսմների տէր են, ուստի, միանգամայն վերակենդանացած յոյսերով արքայազնի համոզող խօսքերից, նա առաջնորդեց արաբին դէպի բազմաթիւ դռներով պաշտպանուած աշտարակի վերին յարկը, ուր արքայ-

դստեր սենեակն էր։ Դէպի սրահը բացուող մի կարգ վանդակազարդ լուսամուտներից երևում էր ամբողջ Տօլեդօ քաղաքը իւր շրջակայքով։ Բայց այդ պատուհանները վարագուրուած էին, որովհետև արքայադուստրը, վշտաբեկ եղած, ընկած անկողին, չէր դիմանում լոյսին։

Արքայազնը նստեց պատշգամբում և իւր սրնգի վրա սկսեց ածել արաբական այն մի քանի երգերը, որ սովորել էր իւր ծառաներից Գրանադայում։ Սակայն արքայադուստրն անզգայ ընկած էր, և նրա մօտ գտնուող բժիշկներն ուսերը վերքաշում, արհամարհանքով և թերահաւատութեամբ ժպտում էին։ Արքայազնը սրինգը թողեց և սկսեց երգել այն տաղերը, որ իւր նամակի մէջ ուղարկել, իւր սէրն էր յայտնել արքայադստեր։

Տաղի խօսքերն ուշքի բերին արքայադստեր։ Նրա սիրտն ուրախութիւնից աւելի ուժգին սկսեց զարկել։ Նա բարձրացրեց գլուխը և սկսեց լսել։ Արտասուքները հեղեղի պէս վազեցին նրա աչքերից և ողողեցին այտերը, կուրծքը վրդովմունքներից ալեկոծում էր։ Ինչքան կը ցանկանար կանչել իւր մօտ երգչին, սակայն նաժիշտներն այդ նրան չէին թոյլ տալ։ Թագաւորն խստոյն հասկացաւ դստեր ցանկութիւնը, ուստի հրամայեց Ա.Հմեդին ներս՝ սենեակը տանել։ Սիրահարները պարկեշտ ու համեստ դիրք բռնեցին, սակայն դէմքի գոյնը, այդ դէմքի այլայլող, դաւաճանող

գոյնը, նրանց մասին շատ բան էր ասում։ Երբեք երաժշտութեան տարած յաղթանակը այդքան կատարեալ չէ եղած։ Վարդերը կրկին բացուեցին արքայադստեր այտերի վրա, ժպիտը վերադարձաւ նրա շրթունքներին, և նուաղած աչքերը կրկին փայլեցին նախկին կրակով։

Բոլոր բժիշկները, ապուշ կտրած, միմեանց էին նայում։ Ինքն արքան յարգանքով նայում էր արաբ երգչին և զարմանում նրա հմտութեան վրա։

—Հրաշալի երիտասարդ անձնաւոր,—բացականչեց նա,—այսօրուանից դու իմ պալատական առաջին բժիշկը կը լինես, և ես, բացի քո մեղեդիներից, ոչ մի այլ բան չեմ ընդունիլ բժշկուելու համար։ Այժմ ստացիր քո ընծան, ինչ որ ամենաթանկագինն ես համարում իմ գանձարանում։

—Ո՛վ արքայ,—բացականչեց Ա.Համեդը,—ես ոչ արծաթ եմ ցանկանում, ոչ ոսկի, ոչ թանկագին ակներ։ Ինձ միայն ցանկալի է այն հնութիւնն ունենալ, որ Տօլեդօ քաղաքի առումից յետոյ ձեր ձեռքն է հասել մուսուլմաններից։ Պարգևիր ինձ սանդալի փայտէ արկղը իւր միջի գորգով, ընծայիր այդ միայն, և ես գրանով գոհ կը մնամ։

Բոլոր ներկայ եղողներն արաբի այդ չափաւոր ցանկութեան վրա զարմացան, ևս առաւել, երբ բերուեցաւ արկղը և հանեցին նրա միջից գորգը։ Կանաչագոյն բարակ մետաքսից էր նա, հրէից և քաղդէացոց տառերով։ Բժիշկները նայում էին մի-

մեանց և, ուսերը վերքաշելով, ծիծաղում էին նորընծայ բժշկի այս չափաւոր պահանջի վրա, որ կարողացաւ գոհ մնալ այսչափ մի չնչին բանով։

—Այս գորգը,—ասաց արքայազնը,—որ մի ժամանակ Սողոմոն իմաստունի գահն էր զարդարում, արժանի է գեղեցկուհու ոտքերի տակ ձգուելու։

Այս խօսքերից յետոյ փուեց նրան սրահում, բազմոցի առաջ, որ բերած էին արքայադստեր համար, յետոյ, ինքն էլ նստելով նրա ոտքերի մօտ, ասաց.

—Ո՛վ կարող է վերահասու լինել ճակատագրի գրքում գրուածին։ Նայիր աստղագէտների նախագուշակութիւններին և իմացիր, ո՛վ արքայ, որ ես և քո դուստրը փոխադարձ սիրով վաղուց էինք ծածուկ միմեանց սիրում, իմացիր, որ ես *Սիրոյ ուխտաւորն* եմ։

Մի ակնթարթում, երբ նա արտասանում էր այս խօսքերը, գորգն արքայազնի և արքայազնուհու հետ ի միասին օդը բարձրացաւ։ Թագաւորը և բժիշկները, բերանները բաց և աչքերը չռած, նայում էին նրանց, մինչև որ այս վերջինները սպիտակ ամպերում մի կէտ դարձան և յետոյ բոլորովին անյայտացան երկնքի կապոյտ կամարում։

Թագաւորը, բարկութիւնից բորբոքուած ու փրփրած, կանչեց իւր մօտ գանձարանապետին։

—Ի՞նչպէս համարձակուեցիր,—որոտաց նա,—

անպատիւ մէկին Թոյլ տալ գրաւելու մի այդպիսի Թիլիմի։

—Աւաղ, իմ տէր Հրամանատու,—պատասխանեց նա, մենք չիմացանք, Թէ ինչ էր պարունակում արկղը, և չը կարողացանք նրա արձանագրութիւնը կարդալ։ Եթէ, ճշմարիտ, այդ Սողոմոն իմաստունի գահի իսկական գորգն է, այն ժամանակ նա դիւթական յատկութիւն ունի իւր մէջ և կարող է սեպհականացնողին օդի միջով մի տեղից միւս տեղ տեղափոխել։

Թագաւորը բազմաթիւ զօրք ժողովեց և փախստականների յետևից գրոհ տուեց դէպի Գրանադա։ Զօրքերի չուն բաւական երկար և անօգուտ անցաւ։ Վէգի տափարակում բանակ ձգելով, նա մունետիկ ուղարկեց, խստիւ իւր դասեր վերադարձը պահանջեց։ Թագաւորն ինքը դուրս եկաւ մունետիկի առաջ, շրջապատուած իւր պալատականներով։ Սակայն յանձին այդ Թագաւորի նա ճանաչեց երգչին։ Ա.Համեդը իւր հօր մահից յետոյ ժառանգել էր նրա գահը, և չքնաղ Ալհիհօնդան արդէն նրա կինն էր։

Քրիստոնեաների Թագաւորը հանգստացաւ, երբ իմացաւ, որ իւր դուստրը հաւատարիմ է մնացել իւր նախնիքների հաւատին, Թէև ինքը շատ էլ բարեպաշտներից չէր։ Արիւնահեղ պատերազմների փոխարէն, մէկը միւսից յետոյ, սկսեցին հանդէսները և տօները, որոնցից յետոյ արքան

վերադարձաւ դէպի Տօլեդօ, իսկ երիտասարդ զոյգը երջանիկ ու իմաստուն կերպով սկսեց Թագաւորել Ալհամբրայում։

Չի կարելի լռութեան տալ, որ բուն և Թուլթակն ուղեկցում էին հերթով արքայազնին դէպի Գրանադա։ Առաջինն ամեն երեկոյ կանգ էր առնում այն տեղերում, ուր իւր նախորդների ժառանգական կալուածներն էին գտնվում, իսկ վերջինն ուրախ շրջաններին էր զբաղեցնում քաղաքներում և գիւղերում։

Ա.Համեդն առատօրէն վարձատրեց նրանց ցոյց տուած ծառայութիւնների փոխարէն. բուին առաջին նախարարի պաշտօնը տուեց նա, իսկ Թուլթակին իւր արարողապետը նշանակեց։ Վերջերում յայտնուեց, որ ոչ մի տէրութիւն այնպէս իմաստութեամբ չէր կառավարվում, ինչպէս կառավարվում էր Ա.Համեդի երկիրը, և ոչ մի արքունիքում այնպիսի ճշտութիւն չը կար արարողութիւններում, ինչպէս նրա արքունիքում։





ՈՒՂՂԵԼ

Երես	Տող	Սխալ	Ուղիղ
48	7	Նրա	Նա
52	3	տ-նաժիշ	նաժիշտ-